

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Մամուլի Ազատության Աղիւսակին Վրայ Հայաստան Աւելի Առաջ Է՝ Քան Ամերիկան

«Լրագրողներ Առանց Սահմանների» միջազգային կազմակերպությունը այս շաբաթ հրատարակեց 2025 թուականի Մամուլի ազատության ընդհանուր ցուցակը, ուր ի յայտ կու գայ թէ Հայաստան ոչ միայն բարելաված է աղիւսակի վրայ իր դիրքը, այլ առաջ անցած՝ «ազատության ոստան» Միացեալ Նահանգներին:

180 երկիրներու շարքին Ամերիկան դասուած է 57-րդ դիրքի վրայ, որ մինչեւ օրս գրանցուած ամենէն ցած դասաւորումն է այս երկրի համար: «Լրագրողներ Առանց Սահմանների» տարեկան զեկոյցը Ամերիկեան մամուլի գծով ազատութիւններու հետընթացին որպէս պատճառ կը յիշէ նախագահ Թրամփի յարձակումները լրագրողներուն դէմ, զանոնք անուանելով «ժողովուրդի թշնամիներ», պետական յատկացումներու դադարեցումը այն լրատուամիջոցներուն, որոնք կը քննադատեն կառավարութիւնը եւ լրատուամիջոցներու կեդրոնացումը սահմանափակ թիւով մարդոց ու ընկերութիւններու ձեռքերուն մէջ:

Ամերիկայի այս նահանգին դիմաց, նոյն զեկոյցին համաձայն Հայաստան բարելաված է իր դիրքը՝ 43-րդ տեղէն բարձրանալով 34-րդ դիրքը, առաջ անցնելով տարածաշրջանի երկիրներէն, որոնք բոլորն ալ դասուած են հարուրէն վեր դիրքերու վրայ: Հայաստան այս յաջողութեան հասած է հակառակ դիմագրուած ներքին ու արտաքին բազմաթիւ մարտահրաւերներուն: «Լրագրողներ Առանց Սահմանների» կազմակերպութեան զեկոյցը այդ մարտահրաւերներու շարքին կը յիշատակէ ապատեղեկատուութիւնը, ատելութեան խօսքը, Ատրպէյճանի հետ սահմանային անվտանգութեան խնդիրները եւ Ռուսաստանի հետ բարդ յարաբերութիւնները:

2018-ի թաւշեայ յեղափոխութենէն ասդին միջազգային անխտիր բոլոր իրաւապաշտպան կազմակերպութիւնները իրենց տարեկան զեկոյցներուն մէջ կ'արձանագրեն ժողովրդավարութեան գծով Հայաստանի մէջ նկատուող յառաջընթացը: Նոյնիսկ այն զեկոյցները, որոնք կ'անդրադառնան որոշ ժլխտական երեւոյթներու, կու գան եզրակացնելու, որ երկրի իշխա-

Հայաստան Բարելաված է Դիրքերը Մամուլի Ազատութեան Ընդհանուր Աղիւսակին Վրայ



«Լրագրողներ Առանց Սահմանների» (Reporters Without Borders - RSF) կազմակերպութիւնը հրատարակած է 2025 թուականի Մամուլի ազատութեան ընդհանուր ցուցակը, ըստ որուն՝ Հայաստան զգալի յառաջընթաց արձանագրած է՝ բարձրանալով 9 հորիզոնականով:

180 երկիրներու շարքին Հայաստանը զբաղեցուցած է 34-րդ տեղը: 2024 թուականին Հայաստան

եղած է 43-րդ տեղը՝ 71.6 միավորով, իսկ 2023-ին՝ 49-րդ տեղը, 70.61 միավորով:

Այս ցուցանիշով Հայաստանը առաջատարն է տարածաշրջանին մէջ:

Համեմատութեան համար՝ Վրաստանը նահանջած է 11 տեղով եւ այժմ կը գրաւէ 114-րդ տեղը, Ատրպէյճանը՝ 167-րդ, Թուրքիան՝ 159-րդ, Իրանը՝ 176-րդ, Ռուսաստ-


Աջակցելով Հայաստանին՝ Կ'աջակցինք Մեր Արժէքները Կիսող Ժողովրդավարական Երկրի. Տրանսպի դեպի

Ֆրանսայի դեպի Օլիվիէ Տրեքորնի «X»-ի իր հշով գրառում ըրած է, ուր անդրադարձած է մամուլի ազատութեան համաշխարհային ցուցակին մէջ Հայաստանի գնահատականին:

««Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպութեան 2025 թ. մամուլի ազատութեան համաշխարհային անդրադրուած մէջ Հայաստանը 180 երկիրներու շարքին կը զբաղեցնէ 34-րդ տեղը՝ շարունակելով յառաջընթացը եւ հաստատուելով որպէս ազատութեան կղզեակ տարածաշրջանին մէջ:

Աջակցելով Հայաստանին՝ մենք կ'աջակցինք ժողովրդավարական երկրի մը, որ կը կիսէ մեր արժէքները», - գրած է դեպի:

Կը Սպասուի Սերկէյ Լաւրովի Այցը Հայաստան



Ռուսաստանի Դաշնութեան ամենաբարձր մակարդակներով ՀՀ իշխանութիւններուն նկատմամբ բազմաթիւ մեղադրանքներ կը հնչեն, բայց մենք կը պատրաստուինք Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի եւ Դաշնային խորհուրդի ղեկավարի այցին:

Լրագրողներու հետ զրոյցին այս մասին յայտնած է Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը:

Յիշեցնենք՝ Փետրուար 25-ին ՌԴ Դաշնային խորհուրդի մամուլի ծառայութիւնը յայտնած էր, որ Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի Դաշնութեան խորհուրդի նախագահ Վալենտինա Մաթվիենքոն պիտի այցելէ նաեւ Երեւան՝ հայ-ռուսական միջպետական յարաբերութիւններուն նոր լիցք հաղորդելու համար:

Եւրոպական Ժողովրդական Կուսակցութեան Գոնկրէտը Հայաստանի Վերաբերեալ Հրատապ Բանաձեւ Ընդունած Է



Վալենսիայի մէջ ընթացող Եւրոպական Ժողովրդական Կուսակցութեան (EPP) գոնկրէտը «Հայաստանի մէջ ընթացիկ քաղաքական իրավիճակը» վերնագրով բանաձեւ ընդունած է՝ ողջունելով Հայաստանի մէջ տեղի ունեցող ներքաղաքական զարգացումները, այդ շարքին՝ ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ օրէնքի գերակայութեան ոլորտին մէջ իրականացուած բարեփոխումները, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւնները կար-

գաւորելուն ուղղուած Հայաստանի ջանքերը, կարեւորած է Պաքուի մէջ ապօրինի պահուող հայերու ազատ արձակումը, ինչպէս նաեւ Հայաստան-Եւրոմիութիւն յարաբերութիւններու սերտացումը:

Եւրոպական խորհրդարանի պատգամաւորներ Միլիամ Լեքսմանի (Սլովաքիա) եւ Ռասա Իւնքելիչենի (Լիտուանիա) հեղինակած բանաձեւը նաեւ ողջունած

Քարը՝ Պաշտամունքի Առարկայ Եւ Դիւանագիտական Ձեւք. Ինչպէս Է Պաքուն Աշխարհով Մէկ Օգտագործում Դէյոյար Ալիեւի Արձանները

ՇՈՒՇԱՆՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Աշխարհի բազմաթիւ այլ մայրաքաղաքներէ հետքերով եւ օրինակով Մոսկուայում շուտով կը յայտնուի Ատրպէյճանի երրորդ նախագահ Հէյդար Ալիեւի յուշարձանը, որի հիմքի առաջին քարը դրուել է 2 երկրի բարդ յարաբերութիւններէ ֆօնին այս տարուայ մարտին:

Ատրպէյճանի ներկայիս առաջնորդ Իլհամ Ալիեւի հօր՝ նախկին առաջնորդ Հէյդար Ալիեւի կերպարը Պաքուն արդէն աւելի քան 2 տասնամեակ օգտագործում է սեփական երկրում որպէս պաշտամունքի առարկայ, իսկ աշխարհով մէկ՝ որպէս դիւանագիտական գործիք, որի մասին քիչ է խօսուում:

Յիրաւի, ուշագրաւ է կանգնեցնել սեփական հօր արձանը, փառաբանել վերջինիս տարին մի քանի անգամ, նրա յիշատակութեան օր սահմանել օրացոյցում, արձանի քարն ու գրանիտը կուռք ու երկրպագութեան առարկայ սարքել սեփական ժողովրդի համար եւ զէնք՝ դիւանագիտական յարաբերութիւններում:

Սկզբում Մոսկուայում տեղադրուող արձանի մասին

Նախ նշենք, որ Հէյդար Ալիեւի արձանը ՌԴ-ում կանգնեցուել է վաղուց, ընդ որում՝ ոչ մէկ օրինակից, սակայն մայրաքաղաք Մոսկուայում այն չկար:

Մոսկուայի քաղաքապետ Սերգէյ Սոբյանինի խօսքով՝ Ռուսաստանի իշխանութիւններին Մոսկուայում Հէյդար Ալիեւի յուշարձան կանգնեցնելու ինդրանքով դիմել է Բայկալ-ամուր մայրուղու շինարարների համայնքը (ԲԱՄ):

«Հէյդար Ալիեւը վերահսկում էր այս շինարարական նախագիծը, կարծես դա իր սեփական երեխան լինէր», - ասել է Ռուսաստանի վերտրաններէ միութեան փոխնախագահ Ալեքսանդր Բիչկովը Առաջին ալիքի ռեպորտաժում:

Սոբյանինի խօսքով՝ ԲԱՄ-ի աշխատակիցների ինդրանքը ստացուել է անցեալ տարի՝ Բայկալ-ամուր մայրուղու շինարարութեան 50-ամեակի տարում: Արձանը կը տեղադրուի Ատրպէյճանի դեսպանատան յարակից այգում (առաջին հիմնաքարը դրուել է Մարտի 4-ին):

Սա հենց այն շրջանն էր, երբ Մոսկուան փորձում էր հարթել յարաբերութիւնները Պաքուի հետ անցեալ տարեվերջին Ակտուսի մօտ կործանուած Գրոզնի թռչող AZAL ինքնաթիռի դէպքից յետոյ:

Ատրպէյճանը, յիշեցնենք, վստահ է եւ պնդում է, որ ինքնաթիռը խոցուել է ռուսական հակաօդային պաշտպանութեան համակարգի կողմից: Նախագահ Վլադիմիր Փութինը ներողութիւն է խնդրել Իլհամ Ալիեւից «ողբերգական միջադէպի» համար, սակայն չի ընդունել Ռուսաստանի պատասխանատուութիւնը:

Այդ ժամանակից ի վեր Պաքուն փակուեցին ռուսական մշակութային «ռուսական տունը» եւ ռուսական պետական Sputnik գործակալութեան ներկայացուցչութիւնը, իսկ ատրպէյճանական տեղեկատուական դաշտում կրկին բորբոքուեց ռուսական դպրոցների փակման մասին քննարկումը:



Հէյդար Ալիեւի յուշարձանի հիմնաքարի տեղադրումը «կարելու մշակութային եւ հումանիտար իրադարձութիւն» կը լինի երկու երկրների համար, ասել էր ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Ջախարովան՝ փառաբանելով Ատրպէյճանի նախկին նախագահին ու նշելով. «մեր երկրում մենք պահպանում ենք յիշողութիւնը եւ մեծ ջերմութեամբ ու յարգանքով ենք վերաբերում այս պայծառ, արտասովոր, տաղանդաւոր մարդուն ու պետական գործչին»:

Ալիեւ աւագի արձաններն աշխարհում ամենուր եւ

Ատրպէյճանի հանգուցեալ նախագահի «յիշատակը պահպանուում է» ոչ միայն Ռուսաստանում. յուշարձանները սկսել են յայտնուել ամբողջ աշխարհում Ալիեւի մահից անմիջապէս յետոյ՝ 2003 թուականից սկսած:

Յուշարձաններ են տեղադրուել սերբական Բելգրադում եւ Նովի Սադում, Բուխարեստում, Անքարայում, Կիեւում, վրացական Թիֆլիսում եւ Ռուսթավիում, Գանադայում, Եգիպտոսում եւ Մեքսիկայում, ՌԴ Աստրախան եւ Ուլիանովսկ քաղաքներում, Գրոզնիում:

Ինչո՞ւ են դրանք կանգնեցուում

BBC-ն գրում է, որ 2007 թուականի վերջին Պաքուի արուարձանում յայտնուեց Եգիպտոսի այն ժամանակուայ նախագահ Հոսնի Մուպարաքի յուշարձանը, իսկ մի քանի ամիս անց հայելային կերպով Գահիրէի մօտ բացուեց Հէյդար Ալիեւի յուշարձանը:

Մէկ տարի անց Մուպարաքի կրնը՝ Սիւլեյման, այցելեց արձանի կողքին գտնուող դպրոց եւ ասաց, որ այն առաջարկում է յատուկ դասընթաց երկու առաջնորդների «ժառանգութիւնների ուսումնասիրութեան» վերաբերեալ:

Հէյդար Ալիեւի հնարաւորինս շատ արձանների տեղադրումը դարձել է ժամանակակից ատրպէյճանական պետութեան արտաքին քաղաքական նպատակներից մէկը՝ ընդգծել Ատրպէյճանի ներկայութիւնը այլ երկրներում նոր յուշարձաններով:

Այն երկրները, որոնք ցանկանում են որոշակի տնտեսական նախապատուութիւններ ունենալ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններում, պատրաստ են դա անել, իսկ Պաքուն շատ դէպքերում արձանի տեղադրումն օգտագործում է որ-

պէս խայծ:

Ուշագրաւ է, որ 2011 թուականին Մուպարաքի ռեժիմի տապալումից յետոյ Գահիրէում ապամոնտաժուել է Ալիեւի յուշարձանը, Պաքուն պատասխանել է նոյն կերպ՝ ապամոնտաժելով Մուպարաքի յուշարձանը:

2004 թուականին էլ Թիֆլիսում է յայտնուել Հէյդար Ալիեւի յուշարձանը: Նրա պատուին վերանուանուել է նաեւ Քուրի ամբարտակի մի մեծ հատուած:

Այն ժամանակ վրաստանը դեկավարում էր Միխեիլ Սաակաշուիին, որը ջերմ յարաբերութիւններ ունէր Իլհամ Ալիեւի հետ: Բացի այդ՝ վրաստանն ու Ատրպէյճանը ամուր յարաբերութիւններ ունեն նաեւ Գազի եւ միջազգային հաղորդակցութեան ոլորտներում:

Բոլորը չէ, որ գոհ են

«Պարոն Ալիեւի արձանը կասկածելի եւ անհասկանալի բարձր պատիւ է Մեքսիքոյի համար, երբ Մեքսիքոն ոչինչ պարտք չէ Ալիեւին». այսպիսի սահմանում է տուել 2013 թուականին Մեքսիքայի մայրաքաղաքի միջազգային յարաբերութիւնների համակարգող Կուաուտեմոկ Կարդենասին:

Դրան նախորդել էր յուշարձանի դէմ հասարակական արշաւը: Քննադատներից մէկն ասել էր, որ կարդացել է New York Times-ում Ալիեւի մահախօսականը, որում նա նկարագրուում է որպէս «խորհրդային հետախուզութեան նախկին գեներալ, որը երկաթէ բռունցքով պահել է Ատրպէյճանը 30 տարի՝ սկզբում որպէս խորհրդային առաջնորդ, իսկ յետոյ՝ որպէս ընտրուած նախագահ»:

Ատրպէյճանի դեսպանատունը բողոքել է Մեքսիքայի դժգոհութիւններից: Փաստն այն է, որ Պաքուն ֆինանսաւորել է ոչ միայն Ռեֆորմի պողոտայում արձանի կառուցումը, այլեւ մօտակայ այգու բարեկարգումը, որի վրայ ըստ լրատուամիջոցների հրապարակումների՝ ծախսուել է մօտ 5 միլիոն տոլար:

Ինչպէս այն ժամանակ BBC-ին տուած հարցազրոյցում ասել է Մեքսիքայում Ատրպէյճանի դեսպան իլգար Մուխտարովը, յուշարձանի կառուցումը եւ այգու վերակառուցման աշխատանքները երախտագիտութեան նշան էին Մեքսիքային Ատրպէյճանի անկախութիւնն առաջիններից մէկը ճանաչելու համար:

Յուշարձանն ապամոնտաժուել

է, իսկ դրան ի պատասխան՝ հաղորդուել, որ Պաքուն սառեցրել է Մեքսիքայում ծրագրուած ներդրումները գրեթէ 4 միլիոն տոլար արժողութեամբ նախագծերում:

Արձանները կանգնեցուում են Պաքուի ֆինանսաւորմամբ՝ միլիոնների գերազանցումով

Երկրները պատրաստ են ընդունել Ալիեւի յուշարձանները ոչ միայն դիւանագիտական փոխադարձութեան շրջանակներում, այլեւ հաւանաբար այն պատճառով, որ յուշարձանը յաճախ տեղադրուում է մի քանի միլիոն տոլար արժողութեամբ ներդրումներով՝ շրջակայ տարածքի բարեկարգում, այգու հիմնում կամ պողոտայի բարեկարգում:

Աստրախանի թմբի վրայ, օրինակ, յուշարձանի կողքին, ատրպէյճանական փողերով կառուցուել են Բարեկամութեան հետիոտնային կամուրջ եւ Հէյդար Ալիեւի անուան հրապարակ: Կամրջի կառուցումը Ատրպէյճանին արժեցել է մօտ 1,3 մլն. տոլար:

Կիեւում արձանի կողքին արեւելեան ոճի որմնանկարով, շքեղ աստիճաններով եւ շատրուանով այգի է բացուել: Շինարարութիւնը ֆինանսաւորել է Ատրպէյճանի պե-

Շար.ը էջ 6

ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$150.00 (First Class)
Canada \$ 250.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Եթէ Այս Ուրբաթ Ըլլան Ընտրութիւններ, «Քաղաքացիական Պայմանագիրը» Կը Յաղթէ՝ Հաւաքելով 50+1%: Ալէն Սիմոնեան

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի խօսքով՝ ընդդիմութեան ներկայացուցիչներուն սկսած իմփիչմենիթը աշխուժացած է, քանի որ եկած է պարունամառ հաւաքածուի քաղաքական ցուցադրութեան ժամանակահատուածը:

Լրագրողներու հարցումին, թէ արդեօ՞ք ներկայիս իրավիճակը բաւարար չէ այդ գործընթացը սկսելու համար, Սիմոնեան նկատեց.

«ՀՀ-ն ունի օրինական ընտրուած իշխանութիւն, այսօրուայ հարցումները եւս ցոյց են տալիս, որ իշխող ուժը առաջինն է հարցումներով, ամենամեծ սատարումն ունի ՀՀ ժողովրդի մօտ: Կարող եմ ասել եւ վստահ եմ, որ եթէ այս Ուրբաթ լինեն ընտրութիւններ, «Քաղաքացիական Պայմանագիրը» կը յաղթի՝ հաւաքելով 50+1%: 2026



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

թուականին մօտ այս թուերը կարող են աւելի բարձր լինել»:

Ամուլսարի Գործարկումը Կրնայ Դրական Ազդեցութիւն Ունենալ ՀՆԱ-ի Աճին Վրայ



Ամուլսարի գործարկումը կրնայ ունենալ դրական ազդեցութիւն: Եթէ այս տարի արդէն աշխատանքը սկսի, այդ կրնայ որոշակիօրէն՝ 0,5 տոկոսի սահմաններուն մէջ, ազդեցութիւն ունենալ ՀՆԱ-ի աճին վրայ: Ասուլիսի ժամանակ այդ մասին ըսաւ ՀՀ ելեմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեանը:

«Բոլորը արդէն այն մասին են խօսում եւ, որ Հայաստանի Հանրապետութեան տնտեսական աճը վերադառնում է իր հաւանական աճին, որը մեր կարծիքով կազմում է 5-

5,5%: Հաշուի առնելով նախորդ տարիների մեծ աճերը կարող է որոշակիօրէն այդ հաւանականից աճի զգալիօրէն բարձր լինել, բայց տոկոսային առումով ցածր լինել, որովհետեւ հինքը արդէն բարձր է», - ըսաւ նախարարը՝ ընդգծելով, որ կը կարծէ, թէ պիտոճէին մէջ դրուած տնտեսական աճի ցուցանիշին պիտի կարենան հասնիլ:

«Քանի որ տարուայ վերջում է ծրագրաւորուած Ամուլսարի գործարկման ազդեցութիւնը, կարող է սահմանային լինել», - յայտնեց նախարարը:

Հայաստանը 236 Միլիոն Եւրոյի Նոր Վարկ Պիտի Ստանայ «Հիւսիս-Հարաւ» Ճանապարհին Համար

Հայաստանը 236 միլիոն եւրոյի նոր վարկ պիտի ստանայ Ասիական զարգացման դրամատունէն: Կառավարութիւնը հաւանութիւն տուաւ Միջազգային դրամատան հետ նոր վարկային համաձայնագրին: 236 միլիոն եւրոյի վարկը պիտի յատկացուի «Հիւսիս-Հարաւ» ճանապարհի 27,1 քմ-նոց հատուածի կառուցման համար:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցութեան նախարար Դաւիթ Խոզաբեկեանի խօսքով՝ Ֆինանսաւորումը պիտի ուղղուի Միսիս-Քաղաքան շուրջ 60 քմ-նոց հատուածի հիւսիսային եւ թաւատուածի կառուցման, որուն ընդհանուր արժէքը կը կազմէ 335 միլիոն եւրո:

«Մեզ համար առանցքային կա-

րելորութիւն ունեցող «Հիւսիս-Հարաւ» ճանապարհահատուածի Միսիս-Քաղաքան շուրջ 60 քմ-նոց հատուածը բաժանել ենք երեք ենթահատուածների՝ հիւսիսային, Բարգուշատի փապուղիի ենթահատուած եւ հարաւային: Այս վարկով կը կառուցուի հիւսիսային ենթահատուածը», - նշեց նախարարը:

Վարկի շրջանակներուն մէջ կը նախատեսուի կառուցել 27,1 քմ երկարութեամբ ժամանակակից ճանապարհ՝ քանի մը փապուղիներով եւ բազմաթիւ կամուրջներով: Ճանապարհը պիտի ունենայ 11 մեթր լայնութիւն եւ երեք երթեւեկելի գոտի: Շինարարութեան աւարտէն յետոյ այս հատուածին մէջ 1,5-2 ժամով պիտի կրճատուի երթեւեկութեան ժամանակը:

Եթէ «Հայաստան» Դաշինքը Առաջարկէ Ռոպերթ Քոչարեանի Թեկնածութիւնը, Մենք Կը Միանանք. Հայկ Մամիջանեան

Եթէ «Հայաստան» դաշինքը առաջարկէ Ռոպերթ Քոչարեանի թեկնածութիւնը, մենք կը միանանք:

Լրագրողներու հետ զրոյցին այս մասին ըսած է «Պատիւ Ունեմ» խմբակցութեան նախագահ Հայկ Մամիջանեանը:

«Կայ շատ պարզ տրամաբանութիւն. Ազգային Ժողովի պատգամաւորներին հարցրել են՝ նախաձեռնու՞մ էք գործընթաց, թէ՞ չէ: Մենք դրան պատասխանել ենք, որ մենք պատրաստ ենք այս պահին նախաձեռնել, միակ խնդիրը, որ անհրաժեշտ է լուծել, թեկնածուի հարցը միասին քննարկել, եւ մենք նոյն վայրկեանին կը նախաձեռնենք այդ գործընթացը:

«Այսինքն՝ որեւէ նախապայման նման դէպքում չկայ: Նորից եմ ասում՝ իրական ընդդիմադիր ցանկացած թեկնածուի հետ մենք սիրով կը նախաձեռնենք այդ գործընթացը:

«Այո՛, եթէ «Հայաստան» դաշինքն առաջարկի Ռոպերթ Քոչարեանի թեկնածութիւնը,



«Պատիւ Ունեմ» խմբակցութեան նախագահ Հայկ Մամիջանեան

մենք կը միանանք», - ըսած է Մամիջանեան՝ նկատի ունենալով ՀՀ վարչապետին ենթադրաբար իմփիչմենիթի ենթարկելէ չեստոյ կառավարութեան ղեկավարի հաւանական թեկնածուի որոշումը:

«Հայաստան» Դաշինքի Յայտարարութիւնը՝ Վարչապետի Պաշտօնագրի Վերաբերեալ

Ռոբերթ Քոչարեանի ղեկավարած Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցութիւնը յայտարարութիւն տարածած է՝ յայտարարելով, թէ մշտապէս կողմնակից եղած են Նիկոլ Փաշինյանը հեռացնելու որեւէ տարբերակի կիրառման եւ առաջինը յայտարարած են իմփիչմենիթի իրաւական գործիքը կիրառելու տարբերակին մասին:

Խմբակցութիւնը յիշեցուցած է, որ գործող վարչապետին անվստահութիւն յայտնելը Ազգային Ժողովին մէջ կրնայ քննարկուել միայն այն պարագային, երբ առնուազն 36 պատգամաւոր տրամադրէ գործընթացի մեկնարկի համար անհրաժեշտ ստորագրութիւն, իսկ գործընթացի յաջողութեան համար կը պահանջուի նուազագոյնը 54 ձայն՝ Աժ պատգամաւորներուն պարզ մեծամասնութիւնը:

Միաժամանակ խմբակցութիւնը ընդգծած է, որ առանց փողոցը ձեւաւորուած հզօր, համաժողովրդական ճնշման անհնար է իմփիչմենիթի յաջողութեան համար անհրաժեշտ՝ շուրջ երկու տասնեակ լաւելեալ ձայներու ապահովումը: Ռոպերթ Քոչարեանի խմբակցութիւնը, սակայն, կը կարծէ, որ նոյնիսկ այդպիսի ճնշումը վերջնական չ'երաշխաւորեր անհրաժեշտ ձայներու ապահովումը:

րաժեշտ ձայներու ապահովումը: Վերջիններս նշած են, որ իմփիչմենիթի նպատակով փողոցը ստորագրահաւաք նախաձեռնողները քաղաքական կուսակցութիւններ կամ շարժումներ չեն ներկայացներ եւ, ըստ էութեան, որեւէ քաղաքական պատասխանատուութիւն չեն կրեր իմփիչմենիթի հաւանական ձախողման եւ անոր հետեւանքներուն համար:

«Այսօրուայ դրութեամբ նոյնպէս տեսնելի չէ նրանց կարողութիւնը յաջողութեան համար անհրաժեշտ ընդվզող զանազան յառաջակցութեան հարցում: Այս ամէնը խմբակցութեան մօտ կասկածներ է առաջացնում նախաձեռնութեան իրական նպատակների վերաբերեալ:

«Մենք նաեւ անընդունելի ենք համարում մեր խմբակցութեան պատգամաւորներին թիրախաւորելու, մեզ հետ շանթաբերելու խօսելու փորձերը, որոնք անպատասխան չեն կարող մնալ: Այս գործելաոճը կասկածներ է առաջացնում՝ արդեօ՞ք նախաձեռնութիւնը ուղղուած է Նիկոլ Փաշինեանին հեռացնելուն, թէ՞ դրա տակ թաքնուած է «Հայաստան» խմբակցութեանը թիրախաւորելու նպատակ», - կ'ըսուի խմբակցութեան յայտարարութեան մէջ:

Աշխատատեղերու Թիւը Նախորդ Տարուայ Մարտ Ամսուայ Համեմատ Աճած Է 40.490-ով

Տնտեսութեան նախարար Գէորգ Պապոյեան շնորհաւորական ուղերձ յղած է Աշխատաւորներու միջազգային օրուան առիթով:

«Շնորհաւորում եմ Աշխատանքի եւ աշխատաւորների համերաշխութեան միջազգային օրուայ կապակցութեամբ:

Այս օրը մեզ յիշեցնում է, որ առանց նպատակային, համակարգուած եւ գիտելիքի վրայ հիմնուած աշխատանքի հնարաւոր չէ պահանջել տնտեսական իրական յառաջընթաց:

Աշխատանքը պէտք է ընկալուի որպէս պարտադրանք, տան-

ջանք կամ բեռ, այլ որպէս ինքնադրսեւորման, ստեղծարարութեան եւ կայուն ապագայի կառուցման հնարաւորութիւն:

Ուրախութեամբ նշում եմ, որ գրանցուած աշխատատեղերի թիւը մեր երկրում, նախորդ տարուայ Մարտ ամսուայ համեմատ, աճել է 40.490-ով՝ հասնելով 782.100-ի, իսկ իրական կամ, որ նոյնն է, գնաճով ճշգրտուած աշխատավարձը, նախորդ տարուայ համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, այս պահին առկայ տուեալներով՝ աճել է 4,1 տոկոսով:

ԼՈՒՐԵՐ

Ջայլամային Դիւանագիտութիւն, Կամ Երբ Յարմար ԶԷ Կոյր Ու Խուլ Ենք. «Politico»-ի Յօդուածը Քալլասի Պաքուի Այցի Մասին



Քայա Քալլաս կը դոմաւորուի արտաքին գործոց նախարար Պայրամովի կողմէ

Ուժանիւթային գործարքներէն եւ աշխարհաքաղաքական գոյուշաւորութենէն բխած՝ Եւրոպայի արձագանգը Ատրպէյճանի յարձակման երկար ժամանակէ կը լռէր: Այս մասին կը գրէ «Politico»-ն իր յօդուածին մէջ՝ ԵՄ արտաքին քաղաքականութեան բաժանմունքի ղեկավար Քայա Քալլասի Ատրպէյճան կատարած այցի վերաբերեալ:

Եւրոպացի խորհրդարանականները արդէն իրենց դժգոհութիւնը յայտնած են Քալլասի այցի մասին:

Ապրիլի 24-ին աշխարհասփիւռ հայու թիւերը յարգեց 1915 թուականի ցեղասպանութեան ժամանակ գոհուած 1,5 միլիոն հայերու յիշատակը: ԵՄ արտաքին քաղաքականութեան պատասխանատու Քայա Քալլաս յաջողորմ օր նախընտրեց այցելել Ատրպէյճան, այլ ոչ թէ հարեւան Հայաստան, ինչպէս կ'ընեն սովորաբար շատ դիւանագէտներ:

Պաքու այցը նախատեսուած էր որպէս տարածաշրջանային շրջագայութիւն:

«Ինչ հաղորդագրութիւն կ'ուղարկուի, երբ Եւրոպացի բարձրաստիճան դիւանագէտը կը ժպտի Պաքուի տեսախցիկներուն առջեւ այն պահուն, երբ Հայաստանի քաղաքացիները ծաղիկեպակներ կը դնեն Երեւանի յուշահամալիրին մէջ գոհերու յիշատակին: Ինչո՞ւ Քալլաս կը սիրաշահի Ատրպէյճանին այդքան զգայուն ամսաթիւին»: այս հարցումները ուղղած է Մեծ Բրիտանիոյ Լորտերու պալատի անդամ լորտ Մարք Մաքինսը:

«Դուք կ'այցելէք Պաքուի մենատիրական վարչակարգին եւ կը խուսափիք ժողովրդավարութենէն Երեւանի մէջ: Մինչ Ատրպէյճան կը մերժէ մեր արժէքները, Հայաստան կը մօտենայ Եւրոմիութեան», - այս մասին գրած է Պոլստեսթակի նախկին պատգամաւոր Մայքըլ Ռոթը:

Իսկ Ֆրանսացի օրէնսդիր Իգայէլ Սանթիակո ըսած է՝ սարսափելի է իմանալ, որ ԵՄ բարձր ներկայացուցիչը կը մեկնի Ատրպէյճան Ապրիլ 25-ին, մինչ հայ բանտարկեալները կը շարունակեն մնալ Պաքուի բանտերուն մէջ:

«Իրավիճակը ա՛յլ աւելի կը սրի աչօրուայ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առկայ սուր հակադրութեամբ: Վերջին ութ տարիներու ընթացքին Հայաստանը ժողովրդավարական վերածնունդ ապրած է: 2018 թուականի թաւշայտ յեղափոխութենէն յետոյ երկիրը բարեփոխումներ իրականացուցած է փտածութեան դէմ պայքարի եւ օրէնքի գերակայութեան ամրապնդման հա-

մար: Ընդամենը անցեալ ամիս Հայաստանը օրէնք ընդունեց ԵՄ անդամակցութեան գործընթաց սկսելու մասին՝ արտացոլելով երկրի ապագան Եւրոպայի հետ կապելու ժողովրդական պահանջը: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը կ'առաջնորդուի եւրոպական արժէքներով:

«Ի հակադրութիւն՝ նախագահ Իլհամ Ալիեւի օրօք Ատրպէյճանը դարձած է հիմնական ինքնավարութիւն: Պաքուի մէջ իշխանութիւնը կեդրոնացած է մէկ ընտանիքի ձեռքը, այլախոհութիւնը ճնշուած է, լրագրողները բանտարկուած են, ընտրութիւնները ձեւական են: 2024 թուականի Փետրուարին Ալիեւ վերընտրուեցաւ հինգերորդ անգամ՝ հաւաքելով ձայներու 92 տոկոսը ընտրութիւններուն, որոնք դիտորդները անուանեցին կեղծիք: Ալիեւի վարչակարգը նոյնիսկ Ալիեւի կինը նշանակած է փոխնախագահ:

«Միջազգային հարթակի վրայ Պաքուն ինքզինք լկտի եւ յարձակողական կը պահէ: 2020 թուականին ան պատերազմ սկսաւ Լեռնային Ղարաբաղի մէջ հայերուն դէմ՝ խախտելով փրփու գինադադարը: Աւելի ուշ Ատրպէյճանական ուժերը շրջափակեցին եւ յարձակեցան տարածաշրջանին վրայ՝ ստիպելով աւելի քան 100 հազար հայ խաղաղ բնակիչները լքելու իրենց նախնիներուն տունները. մարդասիրական աղէտ, որ ծաւալեցաւ իրական ժամանակի մէջ, երբ Եւրոպան դիտորդի դերի մէջ էր: Մինչ օրս Ատրպէյճանը անօրինական կերպով պատանդ կը պահէ հայ ռազմագերիները եւ քաղաքացիական անձերը», - կը գրէ «Politico»-ն եւ կը յաւելնէ, որ չնայած այս ամէնուն՝ այն պահէն ի վեր, երբ Եւրոպան փորձեց հրաժարիլ ռուսական կազմէն, ան Ատրպէյճանին կը վերաբերէր որպէս ողջունելի գործընկեր:

«Կը թուի, թէ երբ Եւրոպան կը նայի Կովկասին, կը տեսնէ Ատրպէյճանի քարիւղի ու կազի հորերը, բայց կ'անտեսէ Հայաստանի ժողովրդավարութիւնն ու անվտանգութիւնը:

«Ուժանիւթային գործարքներէն եւ աշխարհաքաղաքական գոյուշաւորութենէն բխած՝ Ատրպէյճանի վարած յարձակման միջազգային արձագանգը երկար ժամանակ տկար եղած է, բայց Եւրոպական անվտանգութիւնն ու արժէքները անբաժանելի են, եւ դաշինքը չի կրնար բացառութիւններ ընել՝ չխաթարելով իր բարոյական հեղինակութիւնը:

Սուրէն Պապիկեան Եւ Նիքոս Տենտիաս Քննարկած Են Պաշտպանութեան Բնագաւառին Մէջ Հայաստան-Յունաստան Առնչուող Հարցեր



Սուրէն Պապիկեանի հանդիպումը Յունաստանի ազգային պաշտպանութեան նախարար Նիքոս Տենտիասի հետ

Յունաստանի Հանրապետութիւն կատարած աշխատանքային այցի շրջանակին մէջ ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդիպած է Յունաստանի ազգային պաշտպանութեան նախարար Նիքոս Տենտիասի հետ:


Հանդիպման մասնակցած է նաեւ Յունաստանի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Տիգրան Մկրտչեան:

Հանդիպման ընթացքին քննարկուած են պաշտպանութեան բնագաւառին մէջ Հայաստան-

Յունաստան համագործակցութեան առնչուող հարցեր: Կողմերը գոհունակութիւն յայտնած են փոխգործակցութեան ներկայիս բարձր մակարդակին առնչութեամբ՝ ընդգծելով ռազմական կրթութեան, տարբեր ուղղութիւններով փորձի փոխանակման եւ այլ ոլորտներու մէջ գործակցութիւնը աւելի զարգացնելու պատրաստակամութիւնը:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ տարածաշրջանային ու միջազգային անվտանգութեան առնչուող հարցերու:

Ֆրանսացի Գործարարները Հետաքրքրուած Են Հայաստանի Մէջ Ներդրումներու Հեռանկարով



Տնտեսութեան նախարար Գեորգ Պապոյեանի հանդիպումը Ֆրանսացի գործարարներու պատուիրակութեան հետ

Հայաստանի տնտեսութեան նախարար Գեորգ Պապոյեան ընդունած է Ֆրանսայի Լիոն քաղաքէն Հայաստան ժամանած մէկ տասնեակէ աւելի գործարարներէ կազմուած պատուիրակութիւնը:

Հանդիպման ընթացքին Ֆրանսացի գործարարները ներկայացուցած են իրենց գործունէութեան ոլորտները, հետաքրքրութիւն յայտնած Հայաստանի մէջ ներդրումներ իրականացնելու, ինչպէս նաեւ փոխշահաւէտ գործակցութիւն ձեւաւորելու վերաբերեալ:

Գեորգ Պապոյեան ներկայացուցած է Հայաստանի ներդրումային քաղաքականութիւնը, ներդրումներուն նպաստող օրէնսդրա-

կան դաշտն ու առեւտուրին աջակցող գործիքակազմը:

«Հայաստանն ընթանում է տնտեսութեան բազմազանման եւ ռազմավարական մի շարք ոլորտների զարգացման ճանապարհով: Մեր առաջնահերթութիւններէն է խթանել օտարերկրեայ ներդրումները՝ ձեւաւորելով առաւել նպաստաւոր, ճկուն եւ կանխատեսելի գործարար միջավայր: Մենք շահագրգռուած ենք սերտ համագործակցութեամբ՝ յատկապէս ֆրանսացի գործընկերների հետ, եւ պատրաստ ենք քննարկել փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ներդրումային ծրագրերի իրագործման հնարաւորութիւնները», - նշած է նախարարը:

«Պաշարման մէջ գտնուող երիտասարդ ժողովրդավարութեան՝ Հայաստանին աջակցելը ոչ միայն ճիշդ բան է, այլեւ կը ծառայէ Եւրոպայի

սեփական երկարաժամկէտ շահերուն կայուն, կանոններու վրայ հիմնուած միջազգային կարգի մէջ», - կ'ըսուի յօդուածին մէջ:

Ընդդիմադիր Շրջանակներ Դժգոհ են Վազգեն Արքեպիսկոպոս Միրզախանեանի Խօսքերէն



Վարչապետ Փաշինեանի հանդիպումը Պալթեան երկիրներու Հայոց թեմի առաջնորդ Վազգեն Արքեպիսկոպոս Միրզախանեանի հետ

Էսթոնիա այցելութեան ընթացքին վարչապետ Փաշինեանի հանդիպումը Պալթեան երկիրներու Հայոց թեմի առաջնորդ Վազգէն Արքեպիսկոպոս Միրզախանեանի հետ անադմուկ չանցաւ Ընդդիմադիր շրջանակներ դժգոհ մնալով առաջնորդին խօսքերէն կը քննադատեն բարձրաստիճան հոգեւորականը, որ կ'աղօթէ Նիկոլ Փաշինեանի ծրագրերուն համար:

«Մեր աղօթքն է, որ, պարոն վարչապետ, Ձեր այն ծրագրերը, որ ունէք խաղաղութեան եւ մեր Հայաստանի հարեւանների հետ հաշտութեան, լինի յաջողութեամբ», - Վազգէն Արքեպիսկոպոսը այսպէս ողջունած է Թալլինի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ վարչապետը, - «կը հրաւիրեմ բոլորին՝ մեր վարչապետի հետ միասին, աղօթքի»:

«Մեր աղօթքն է, որ որպէս եւրոպական երկրների հաւատարմակներ, քաղաքացիներ եւ առաջնորդ՝ մեր երկիրը դէպի Եւրոմիութիւն իր քայլերն անի»: Ռուսաստանի դաշնակից Հայաստանը քայլերը փոխի դէպի Եւրոպա: Որովհետեւ մեր քրիստոնէութիւնը եկել է իրականութեան մէջ արեւմուտքից՝ Տրդատ թագաւորը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, եւ համոզուած են, որ այն քաղաքակրթութիւնը, որ տեսնում են այստեղ, մեր երկրի ապագան այս քրիստո-

նէական գեղեցիկ միջավայրում է: Մեր աղօթքն է, որ այդ յաջողութիւնները լինեն, որ Հայաստանը նոյնպէս Մերձկալթեան երկրների պէս, դիցուք՝ Էսթոնիայի, կարողանայ խաղաղ համագործակցութեամբ մեր ժողովրդին լաւ, գեղեցիկ ապագայ ապահովել: Թող Տէրն օրհնի Հայաստանը, ողջ աւագանին, Ձեզ»:

Վազգէն Արքեպիսկոպոս Միրզախանեանի այս խօսքերը անարձագանգ չթողեց Փաշինեանի քաղաքականութիւնն ու ծրագրերը քննադատող Մայր Աթոռը: Թեմակալ առաջնորդին արտայայտած որոշ միտքեր եւ դատողութիւններ խիստ ենթակայական են, անհատական ու վերագրելի չեն Եկեղեցիին, պարզաբանած են Մայր Աթոռէն. «Որեւէ հարցի առնչութեամբ գնահատականներ հնչեցնելիս, յատկապէս երբ Եկեղեցու պաշտօնական դիրքորոշում առկայ է, եկեղեցականները որոշապէս պէտք է շրջահայեացութուն եւ զգուշաւորութիւն դրսեւորեն թիւր մեկնաբանութիւնների տեղիք չտալու համար»:

Վազգէն Արքեպիսկոպոս Միրզախանեանը մէկ ամիս է Եւրոպայէ տեղափոխուած է: Երկար տարիներ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդն էր, հոգեւոր ծառայութիւնը այստեղ թողած է 2019 թուականին ու տեղափոխուած Մայր Աթոռ:

Մահացած է Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Նախկին Նախագահ, Ակադեմիկոս Ռատիկ Մարտիրոսեանը

Մահացած է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախկին նախագահ, Երեւանի Պետական Համալսարանի նախկին ռեկտոր, ակադեմիկոս Ռատիկ Մարտիրոսեան: Ռատիկ Մարտիրոսեան 89 տարեկան էր:

Ռատիկ Մարտիրոսեան ծնած է 1936 թուականի Մայիս 1-ին:

Մարտիրոսեան 1958-ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի ֆիզիքա-մաթեմատիկայի բաժինը՝ աստղաֆիզիքոսի որակաւորմամբ:

1960-1963 թթ. ուսանած է ԽՍՀՄ ԳԱ Մոսկուայի Պ. Լեբեդեւի անուան ֆիզիքայի ինստիտուտի ասպիրանտուրային մէջ: 1964-1968 թթ. եղած է ՀԽՍՀ ԳԱ Ռատիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի աւագ գիտաշխատող, 1968-1970 թթ.՝ լաբորատորիայի բաժնի վարիչ, 1970-1980 թթ.՝ գիտական աշխատանքներու փոխտնօրէն, 1980-2006 թթ.՝ տնօրէն:

1965 թուականէն դասաւանդած է Երեւանի Պետական Համալսարանին մէջ, 1983-1993 թթ.՝ ԵՊՀ Գերբարձր Յաճախութիւններու Ֆիզիքայի ամպիոնի վարիչ, 1993-2006 թթ.՝ ԵՊՀ ռեկտոր: 2006 թուականէն ղեկավարած է իր ստեղծած ԳԲՀ Ռատիոֆիզիքայի եւ Հեռահաղորդակցութեան ամպիոնը, իսկ 2006-2021 թթ. եղած է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահ: Մարտիրոսեան ԵՊՀ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն էր:

Մարտիրոսեան ուսումնասիրութիւններ իրականացուցած է քուանտային ռատիոֆիզիքայի, գերհաղորդականութեան կիրառական խնդիրներու, տիեզերական հետազոտութիւններու, ռատիոաստղաֆիզիկայի եւ Երկրի բնական պաշարներու ռատիոֆիզիքական մեթոտներով ուսումնասիրութիւններու ոլորտներուն մէջ:

Մարտիրոսեան հեղինակ է աւելի քան 200 գիտական աշխատութեան, որոնք վերաբերած են դեցիմետրական տիրութեան քուանտային ուժեղացուցիչներու ստեղծման եւ անոնց ռատիոաստղագիտական կիրառութիւններուն,



Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախկին նախագահ՝ ակադեմիկոս Ռատիկ Մարտիրոսեան

քուանտային էլեկտրոնիկայի համար արհեստական բիւրեղներու ստեղծման արհեստագիտութիւններու կատարելագործման, բարձր զգայունութեամբ ընդունիչ համակարգերու մշակման եւ ներդրման: Մասնաւորապէս առաջարկած է մակարդակներու շրջման սխեմա մը, որ կ'արտօնէ միաժամանակ ուժեղացնել երկու տարբեր յաճախականութեամբ ազդանշաններ: Փորձնականօրէն իրականացուցած է այդ սխեման 21 սմ. եւ 3 սմ. ալիքային երկարութիւններու համար:

Նա մշակած ալիքատարային քուանտային ուժեղացուցիչը PATAM-600 մեծ ռատիոաստղագիտակի ընդունիչ համակարգի զգայունութիւնը 14 անգամով բարձրացուցած է, որ հնարաւոր դարձուցած է հետազոտել տիեզերական բազմաթիւ լազերային աղբիւրներու ռատիոճառագայթումը: Անոր գիտական ղեկաւարութեամբ Ռատիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտին մէջ ստեղծուած բարձր զգայունութեամբ ռատիոընդունիչ սարքերը լայնօրէն կիրառուած են բնական պաշարներու հետազոտման «Պրիորդ» եւ «Օկեան» տիեզերական ծրագրերներուն մէջ, ինչպէս նաեւ ռատիոաստղագիտական եւ բժշկական սաբանական հետազոտութիւններուն մէջ:

Հայաստան Բարելաւած է Դիրքերը

Շարունակուած է 1-էն

տանը նահանջած է 9 հորիզոնականով եւ յայտնուած 171-րդ տեղը:

RSF-ի գնահատմամբ՝ Հայաստանի մէջ մամուլի ազատութեան վրայ ազդեցութիւն թողած են շարք մը մարտահրաւէրներ, ընդ որում՝ ապատեղեկատուութեան եւ ատելութեան խօսքի տարածումը՝ պայմանաւորուած ներքաղաքական լարուածութեամբ, սահմանային անվտանգութեան խնդիրներով, ինչպէս նաեւ երկրի՝ Ռուսաստանի եւ ԵՄ-ի հետ բարդ յարաբերութիւններով:

Ընկերային ցանցերը կը շարունակեն մնալ տեղեկատուութեան հիմնական աղբիւր՝ հասանելի բնակչութեան շուրջ երկու երրորդին համար:

Բազմաթիւ լրագրողներու եւ լրատուական կառույցներու համար յատկապէս զգայուն են երկու թեմա-

ներ՝ Ատրպէյճանի հետ բանակցային գործընթացը, Հայաստանի ու Ռուսաստանի յարաբերութիւններուն սրումը:

Ըստ ցուցակին՝ լրատուամիջոցներուն մեծ մասը կը վերահսկուի քաղաքական շարժումներուն մօտ կանգնած մարդոց կողմէ կամ աջակցութիւն կը ստանայ ազդեցիկ հասարակական գործիչներու կողմէ:

Չնայած գրպարտութեան ապաքէականացման եւ սեփականութեան թափանցիկութեան, գործող օրէնսդրութիւնը տակաւին լիարժէք չի պաշտպաներ մամուլի ազատութիւնը եւ չի համապատասխաներ եւրոպական չափանիշերուն:

Լրատուամիջոցներուն մեծ մասը ֆինանսապէս կախուած է քաղաքական կամ ազդեցիկ անձերէ: Վճարովի մոտերներ գրեթէ չկան, իսկ գովազդային շուկան տկար զարգացած է:

Եւրոպական Ժողովրդական Կուսակցութեան

Շարունակուած է 1-էն

է Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծը:

ԵԺԿ-ն բարձր գնահատած է Հայաստանի կողմէ վերջերս ընդունուած՝ Եւրոպական Միութեան Հայաստանի անդամակցութեան գործընթացին վերաբերեալ օրէնքը, որ հիմք կը դնէ Հայաստանի եւրոպական համարկման խորացման համար: «Այս քայլը կը վերահաստատէ հայ ժողովուրդին առկայ յանձնառութիւնը երկրին մէջ ժողովրդավարութեան եւ

օրէնքի գերակայութեան ամրապնդման գործին մէջ եւ կը սահմանէ յստակ ուղի դէպի ԵՄ-ի հետ աւելի խոր համարկում», - նշուած է բանաձեւին մէջ:

Բացի ասկէ, բանաձեւին մէջ ասուած է, որ ժողովրդավարութեան, օրէնքի գերակայութեան եւ մարդու իրաւունքներու ոլորտներուն մէջ շարունակական քաղաքական երկխօսութիւնը եւ բարեփոխումները կը շարունակեն մնալ կարեւոր գործիքներ՝ Հայաստանը ԵՄ-ին մօտեցնելու համար՝ ապագայ անդամակցութեան հեռանկարով:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՐԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Մայիս 1-ը Պետական Ահաբեկչութեան Շուրհին Տակ

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Թուրքիոյ Հանրապետութեան ժողովրդավարականացման գործընթացը երբեք հեզասահ ընթաց մը չէ եղած: Օսմանեան Կայսրութեան տարիներէն սկսող այդ գործընթացը յաճախ անկումներ ունեցաւ եւ այդ անկումներէն իւրաքանչիւրը տասնեան տարիներով ետ մղեց դէպի ժողովրդավարութիւն տանող պայքարը: Այդ խոչընդոտները յաճախ գործադրուեցան օրուայ իշխանութիւններու ձեռքով: Հանրապետութեան նախորդող շրջանին երկրի թագաւորն էր, որ լուծարեց Խորհրդարանը եւ վերահաստատեց իր բռնատիրական իշխանութիւնը: Հանրապետական շրջանին այս անգամ բանակն էր որ ինքզինք կը համարէր պետութեան երաշխաւորը եւ չէր արտօներ իր կամքին հակասող որեւէ զարգացումի: Ճիշդ ալ այդ պատճառաւ առնուազն երեք անգամ ընդհատուեցաւ ընտրուած կառավարութեան գործունէութիւնը: Իսկ 1977ին Թուրքիա թերեւս ալ առաջին անգամ ըլլալով ծանօթացաւ իր ժողովուրդի դէմ գործադրուած պետական ահաբեկչութեան հետ: Թէեւ այս գործելակերպն ալ իր աւանդութիւնը ունէր, որ կ'երկարէր մինչեւ 1915 տխուր թուականը: Իսկ 1977ին Թուրքիոյ իշխանութիւնները հետեւելով ամերիկեան գաղտնի գործակալութիւններու ցուցմունքներուն, խաղաղ բնակիչներու արիւնը հեղեցին Թաքսիմի հրապարակին վրայ:

Այդ օրէն այսօր Թաքսիմի հրապարակը կռուախնձորի մը վերածուած է իշխող կառավարութիւններու եւ բանտոր դասակարգը ներկայացնող արհմիութիւններու միջեւ:

Պետութիւնը 48 տարիներէ ի վեր կը շահագործէ իր դաւադրական ոճիրը, հասարակութեան մօտ Մայիս 1 թուականը փորձանքի խորհրդանիշ դարձնելով:

Այդ տպաւորութիւնը գոյացնելու համար կը խզուի քաղաքի երթեկութեան սանձը, բազում ճանապարհներ կը դառնան անանցանելի եւ մարդիկ կը ստիպուին իրենց տուններուն մէջ բանտարկուած մնալու, որպէսզի խուսափին հաւանական չարիքէ մը:

Կարելի է ըսել թէ պետական այս չարամտութիւնն ալ ինչպէս գանազան ուրիշները, յաջողած է իր հետապնդած նպատակին մէջ: Այսօր շատեր միամտօրէն կը կարծեն թէ պետութիւնը այդ արգելքներով կը փորձէ խնայել իր քաղաքացիներու անվտանգութիւնը: Շատ քիչեր միայն կը գիտակցին թէ նման սպառնալիքի բռն հեղինակը նոյն ինքն պետական մարմիններն են: Վերջապէս փորձով տեսած ենք թէ ոստիկանական նման կանխամիջոցներու բացակայութեան պարագային Մայիս 1եան ցոյցերը կը կայանան բոլորովին խաղաղ պայմաններու մէջ: Այդ պատճառաւ ալ Ներքին Գործոց Նախարարութիւնը ամէն տարի ալ աւելի կը սաստկացնէ իբրեւ թէ կանխիչ միջոցները, որոնք ալ աւելի կը գրգռեն Մայիս 1եան ցոյցերու համար փողոց ելլող ժողովուրդը: Վերջապէս գոյացածը պետական դաւադրութիւն մըն է, որ կը կրկնուի ամէն տարի, միշտ պատճառաբանելով հասարակութեան անվտանգութիւնը: Մա ինքնին կախարդական ցուպիկ մըն է կարծես, որ արգելք կ'ըլլայ մարդկային իրաւունքներու գործադրման: Ամէն տեսակ արգելքի դէմ կը պնդեն որ այս արգելքները հասարակութեան անվտանգութիւնը ապահովելու համար դրուած են եւ մարդիկ ակամայ կը հնազանդին, կը հրաժարին նոյնիսկ իրենց սեփական տունը մտնելու իրաւունքէն:

Ճիշդ է որ կայ անվտանգութեան խնդիր մը, բայց արդեօք որո՞ւ անվտանգութիւնը: Հասարակութեան, թէ՛ իշխանութիւններու:

«ԱԿՕՍ»

Քարը՝ Պաշտամունքի Առարկայ

Շարունակուած էջ 1-էն

տական նաւթային ընկերութիւնը՝ SOCAR-ը, բացմանը ներկայ է եղել նրա նախագահը:

Պելգրադում Ալիեւի յուշարձանը գտնուած է Թաշմաշղան գրօսայգում, որը եւս վերակառուցուել էւ ռեստավրացուել է Ատրպէյճանի միջոցներով:

Կուռք դարձած առաջնորդը

Ատրպէյճանցի ընդդիմադիրները, որոնք փախել են բռնաճնշումներից, պարբերաբար բողոքի ակցիաներ են անցկացնում Եւրոպայում՝ պահանջելով քանդել Ալիեւի յուշարձանները աշխարհով մէկ: Սեփական հայրենիքում, առանց բացառութեան բոլոր քաղաքներում կան Հէյդար Ալիեւի յուշարձանները: Ատրպէյճանի օդանավակայանները, այգիները, մզկիթները, սպորտային համալիրները, գործարանները, դպրոցները եւ շատ աւելին անուանակոչուել են նրա պատուին:

Հէյդար Ալիեւը երկրի անցեալի միակ առաջնորդն է, ում յիշատակը թոյլատրուած է յարգել հրապարակայնօրէն: Իր կենդանութեան օրօք 1918 թուականին Ատրպէյճանի առաջին հանրապետութեան հիմնադիր Մամէդ էմին Ռասուլզադեն եւս մեծ հեղինակութիւն է վայելել, բայց Իլհամ Ալիեւի օրօք նրա յուշարձանները քանդուած են՝ միակ առաջնորդ թողնելով Ալիեւի աւագները:

Ոչ բոլոր ատրպէյճանցիներն են սիրում Ալիեւի անձի պաշտամունքը, սակայն դրա դէմ բողոքելը երկրում խիստ վտանգաւոր է: Մայիսի 10-ը՝ Հէյդարի ծննդեան օրը, երկրում ազգային տօն է, որը կոչուած է «Ծաղկի տօն»: 2016 թուականին՝ տօնակատարութիւններին նախորդող գիշերը, երկու տեղացի յուշարձանի վրայ գրեւէին «Նորհաւոր ստրուկների օրը»:

Հենց յաջորդ առաւօտեան ոստիկանները հետաքրքիր գուզադիպութեամբ նրանցից մէկի մօտ երկու կիլօգրամ հերոին են յայտնաբերել, մեղադրուել է նաեւ միւսը «հերոինի գործի» անուան տակ, իսկ իրականում արձանի վրայ գրութեան պատճառով այդ 2 տեղացիին՝ Մամեդովն ու Իբրահիմը, բանտում անցկացրել են 3 տարի:

Զաւեշտ է նաեւ, որ Հէյդար Ալիեւի ոչ պաշտօնական տիտղոսներից մէկը Ատրպէյճանում «ժողովրդական առաջնորդ»-ն է, բայց Պաքուում այս «ժողովրդական» առաջնորդի իւրաքանչիւր յուշարձանի մօտ 24-ժամեայ հսկողութիւն է իրականացուած:

Ալիեւը՝ դրամատուրգների, երաժիշտների եւ բանաստեղծների փոխարէն

Որոշ վրացիներ, Հէյդար Ալիեւի փոխարէն, կը նախընտրեն տեսնել երկու երկրում յայտնի ատրպէյճանցի ճագ երաժիշտ Վազիֆ Մուստաֆազադէի յուշարձանը, որ բազմաթիւ կապեր ունէր Թիֆլիսի հետ:

2011 թուականին «Ազատութիւն» ռատիոկայանի ատրպէյճանական ծառայութեան խմբագիր Չինգիզ Սուլթանսոյը բաց նամակ է ուղարկել ԱԳՆ՝ հարցնելով, թէ ինչու է երկիրը ատրպէյճանական մշակութիւն, օրինակ, բանաստեղծների քարոզելու փոխարէն՝ ամ-

բողջ աշխարհում Ալիեւի յուշարձաններ կանգնեցնում:

Նա պատասխան չի ստացել, եւ 2015 թուականին՝ «Ազատութեան» պիւբլիցիֆակուսից անմիջապէս յետոյ, ճնշումների ներքոյ Սուլթանսոյը փախել է Եւրոպա:

«Այս կառավարութեան նպատակը ոչ թէ Ատրպէյճանի առաջխաղացումն էր, այլ ռեժիմը լեզիտիմացնելը: Բռնապետների յուշարձանները վաղ թէ ուշ հակուած են տապալուելու, նոյնիսկ նրանք, որոնց համար միլիոններ էք տուել եւ վարկեր էք խոստացել: Եթէ նպատակն այլ լինէր, Մեքսիքայում կը լինէր միջնադարեան բանաստեղծ Նախմիլի յուշարձանը», - աւելի ուշ ասել է Սուլթանսոյը:

Ուքրանիան, օրինակ, աւանդաբար աջակցում է բանաստեղծ Տարաս Շեւչենկոյի յուշարձանների տեղադրումը, ինչպէս, օրինակ, Պաքուում 2008 թուականին տեղադրուածը:

Իսկ Սերբիան ֆիզիքոս Նիկոլայ Տեսլայի յուշարձանն է կանգնեցրել Ատրպէյճանի մայրաքաղաքում 2012 թուականին՝ Հէյդար Ալիեւի արձանի՝ Բելգրադում յայտնուելուց մի քանի ամիս անց: Նկատենք՝ սեփական անձնապիւրութեան փառաբանման եւ բռնատիրութեան քարոզի նմանուող արձանների տեղադրման այլ օրինակներ էլ կան:

Օրինակ՝ արտասահմանում կան նաեւ Հէյդար Ալիեւի կոմիկոսի Կենտկոմի գործընկեր Սեւաղախստանի նախկին նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի յուշարձանները: Նրա յուշարձանը կանգնեցուել է 2005 թուականին Ուքրանիայի Կամենսկոյէ քաղաքում, որտեղ Նազարբաեւը սովորել է տեղի արհեստագործական ուսումնարանում, երբ 17 տարեկան էր: Իսկ 2012 թուականին նրա պրոնգէ կիսանդրին յայտնուել է Մոլդովայի Կոմրատ քաղաքում:

Ատրպէյճանի եղբայրական երկրում՝ Թուրքիայում, նոյնպէս գոյութիւն ունի մահացած առաջնորդի անձի պաշտամունք: Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը համարուած է ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը, նրա արձաններն ամէնուրեք են, երկրում Աթաթուրքի անուանական օր եւ տօն կայ: Նրա յուշարձանները կան Աւստրալիայում, Նոր Զելանդիայում, Համաբարապետութիւնում, Ճափոնիայում, ԱՄՆ-ում եւ Քուպայում:

Քուպան նոյնպէս գովազդում է իր հանգուցեալ առաջնորդի յուշարձանները այլ երկրներում: Ֆիդել Քասթրոյի յուշարձաններ կան Մեքսիքայում եւ Մոսկուայում:

Վլադիմիր Փութինի յուշարձաններ եւս կան արտասահմանում: 2019 թուականին Ղրղզստանի իշխանութիւններն են կանգնեցրել նրա յուշարձանը, իսկ մինչ այդ լեւնագագաթն անուանակոչել են նրա անունով: Հարաւային Օսիայում ՌԻ նախագահի յուշարձանը կանգնեցրել է ազատ ոճի ըմբշամարտի Ռուսաստանի հաւաքակալի նախկին մարզիչ Զամբուտ Թեղեեւը:

Այս տուեալներին զուգահեռ որեւէ պետութիւն եւ առաջնորդ, սակայն, չունի այնքան անձային պաշտամունք եւ անձի փառաւորում, որքան Ատրպէյճանն է եւ Հէյդար Ալիեւի որդի Իլհամը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Մամուլի Ազատութեան Աղիւսակին Կրայ

Շարունակուած էջ 1-էն

նութիւններուն վարած քաղաքակաւորութիւնը, առած քայլերը ու օրէնսդրական փոփոխութիւնները լաւատեսութիւն կը խոստանան Յայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման ուղղութեամբ:

Այս բոլորով հանդերձ, ամեն ինչ չէ որ դրական է Յայաստանեան մամուլի պարագային: Երկրէն ներս տիրապետող կը մնայ տարօրինակ ու միաժամանակ մտահոգիչ երեւոյթ մը: Լրատուամիջոցներու 80 տոկոսէն աւելին կը գտնուի ընդդիմադրութեան հսկողութեան տակ: Տարիներու ընթացքին իրենց կուտակած ապօրէն հարստութեան շնորհիւ նախկին համակարգի անդամները հեռատեսիլի ալիքներու ու լրատուական կայքէջերու իրենց ցանցերուն միջոցաւ ապատեղեկատուութիւն տարածելով կ'ապականացնեն քաղաքական մթնոլորտը եւ երկրի ներքին

անդորրը, յաճախ մեծ ծառայութիւն մատուցելով արտաքին թշնամիներուն:

Յայաստանի լրագրողներէն շատերուն մօտ կը պակսի արհեստավարութիւնը եւ իրենց պարտականութեան ճիշդ գիտակցութիւնը ու ըմբռնումը: Իսկական լրագրողէն կը պահանջուի ճշգրիտ ու անկողմնակալ տեղեկութիւն փոխանցել իր ընթերցողներուն կամ լսողներուն: Սակայն, անոնք շատ յաճախ չեն հետեւիր այդ կանոններուն:

Ողջունելով հանդերձ մամուլի ազատութեան գծով Յայաստանի արձանագրած յառաջխաղացումը, պէտք է արձանագրել, որ լրատուամիջոցները ազատ ըլլալով հանդերձ պետական ճնշումներէ, անկախ չեն այս կամ այն ուժերու կամ անհատներու ազդեցութեան:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Prime Minister Nikol Pashinyan: Armenia Pursues a Balanced Foreign Policy



YEREVAN -- Armenia pursues a balanced foreign policy and does not build relationships in one direction at the expense of others.

Prime Minister Nikol Pashinyan assured this during a Q&A session between the government and parliament, addressing concerns that his May 9 visit to Moscow might damage relations with the West.

“We have adopted a balanced and balancing foreign policy. This policy does not involve building relationships in one direction at the expense of others. Moreover, under this policy, it has never been the case that we would not visit the Russian Federation or would not develop and deepen our relations with Russia. I don’t quite

understand these kinds of comments,” Pashinyan stated.

The Prime Minister emphasized the importance of the upcoming event in the context of the victory in World War II. He also noted that these meetings address bilateral agenda issues as well.

When asked whether any bilateral or other meetings are planned during the visit, Pashinyan responded that it is not a formal summit, but there will be interactions. “But to what extent those interactions will be formalized, I’m not sure, because the schedule is very tight. We will be working under these tight conditions. But that there will be interactions, I believe, is obvious,” the Prime Minister said.

Supporting Armenia Means Supporting a Democratic Country That Shares Our Values – French Ambassador

YEREVAN — French Ambassador Olivier Decottignies made a post on his microblog on X, addressing Armenia’s ranking in the global Press Freedom Index.

“Armenia ranks 34th out of 180 countries in the 2025 World Press Freedom Index published by Reporters Without Borders, continuing its progress and standing as an island of freedom in the region.

By supporting Armenia, we are supporting a democratic country that shares our values,” the ambassador wrote.

Earlier it was reported that Armenia holds a high position—34th place—in the World Press Freedom Index.

On December 20, 1993, the UN General Assembly proclaimed May 3 as World Press Freedom Day through a special resolution.

This decision was made during UNESCO’s General Conference, which, in its 1991 declaration “Promoting Independent and Pluralistic Media Worldwide,” recognized that a



free, pluralistic, and independent press is an essential component of a democratic society.

World Press Freedom Day serves as a reminder to the international community that freedom of the press and freedom of expression are fundamen-

Continued on page 3

Armenian, Greek Defense Ministers Discuss Bilateral Cooperation, Regional Security



ATHENS — As part of his working visit to the Hellenic Republic, Armenian Defense Minister Suren Papikyan met with Greek National Defense Minister Nikos Dendias.

Armenia’s Ambassador Extraordinary and Plenipotentiary to Greece, Tigran Mkrtchyan, also attended the meeting.

During the discussions, the two sides addressed issues related to Ar-

menian-Greek cooperation in the field of defense. Both ministers expressed satisfaction with the current high level of collaboration and emphasized their readiness to further develop cooperation in military education, exchange of experience across various domains, and other areas.

The meeting also included an exchange of views on regional and international security issues.

Armenia Significantly Improves Its Ranking in Reporters Without Borders’ Global Press Freedom Index



PARIS — According to the 2025 Global Press Freedom Index published by the international organization Reporters Without Borders, Armenia has made significant progress. Compared to last year’s 43rd place, Armenia has climbed 9 spots, ranking 34th with a score of 73.96 points. The index includes a total of 180 countries.

For comparison: Azerbaijan ranks 167th, having fallen 4 spots from the previous year; Turkey is in 159th place, down 1 spot; Georgia ranks 114th, dropping 11 spots; Russia ranks 171st, down 9 spots; while Iran remains in the same position at 176th.

The report notes that in Armenia,

the primary source of information is social media, accessed daily by two-thirds of the population. It highlights that since the “Velvet Revolution” of 2018, many new media outlets have emerged. Independent news platforms such as Civilnet.am, Hetq.am, Factor.am, and Azatutyun.am are “growing and playing the role of independent watchdogs, which is vital for democracy.” However, it also points out that “the majority of broadcast and print media, which are tied to major political and commercial interests, continue to face pressure regarding their

Continued on page 3

Amulsar Mine Launch Projected to Boost Armenia's 2025 GDP by Up to 0.5%



YEREVAN – The launch of the Amulsar mine this year could contribute up to 0.5% to Armenia's GDP growth in 2025, according to Finance Minister Vahe Hovhannisyanyan.

When asked whether the government's GDP projections remain realistic if the mine fails to launch, Hovhannisyanyan responded: "Armenia's economic growth is returning to its potential, which we estimate at 5%–5.5%," he said at a press conference Friday, noting that the high growth rates of recent years may lead to unrealistic expectations.

He emphasized that all economic growth targets set in the 2025 state budget remain achievable.

"Since the launch of the Amulsar mine is scheduled for the end of the year, its immediate impact will be minimal. The effect depends on when production officially begins," Hovhannisyanyan added.

He also stated that he was not aware of specific discussions between the government and Armenian banks regarding the mine's financing.

At its meeting on February 27,

2025, the Armenian government approved a decision to assist Lydian Armenia in securing credit funding. Specifically, the government will provide a budget guarantee allowing the company to attract up to \$150 million in loans from Armenian banks, with a repayment period of up to five years, to support the launch of the Amulsar gold mine.

Armenia's 2025 state budget projects economic growth of 5.1%. According to the Central Bank's monetary policy report for the first quarter of 2025, GDP growth is expected to range between 4.5% and 7% by year's end, 4.1%–4.7% in 2026, and 4.7%–6.1% in 2027.

Other forecasts for Armenia's 2025 GDP growth include 5.5% from the Eurasian Development Bank (EDB), 4% from the World Bank (WB), 4.5% from the International Monetary Fund (IMF), 4.8% from the European Bank for Reconstruction and Development (EBRD), and 6% from the Asian Development Bank (ADB). Fitch Ratings predicts 4.9% growth, while the United Nations forecasts 5.2% growth in 2025 and 4.7% in 2026.

European People's Party Congress Adopts Resolution on Armenia Welcoming Ongoing Reforms in Democracy and Human Rights



VALENCIA — The European People's Party (EPP) Congress, held in Valencia, adopted a resolution titled "The Current Political Situation in Armenia," welcoming the ongoing domestic political developments in the country. The resolution commended the reforms implemented in the areas of democracy, human rights, and the rule of law, as well as Armenia's ef-

forts to normalize relations with Azerbaijan and Turkey. It also emphasized the importance of securing the release of Armenians illegally detained in Baku and strengthening Armenia-European Union relations.

The resolution, authored by Members of the European Parliament Miriam

Continued on page 4

Permanent Representative of Armenia Presents Credentials to UN Secretary-General



NEW YORK — Permanent Representative of the Republic of Armenia to the United Nations Paruyr Hovhannisyanyan presented his credentials to UN Secretary-General António Guterres.

Following the official ceremony, Ambassador Hovhannisyanyan had a tête-à-tête meeting with the UN Secretary-General, highlighting the steady expansion and deepening of Armenia-UN relations and outlined the steps implemented by the Government of the Republic of Armenia in preparations of hosting the 17th meeting of the Conference of the Parties to the Convention on Biological Diversity (COP17) in 2026.

The interlocutors touched upon a wide range of regional and international issues. Ambassador Hovhannisyanyan presented Armenia's ongoing efforts to ensure durable stability and peace in the region, emphasizing the importance of signing without delay the already agreed-upon text of the "Agreement on Peace and Establishment of Interstate Relations between the Republic of Armenia and the Republic of Azerbaijan." He also underscored the significance of the "Crossroads of Peace" project, initiated by the Government of Armenia, which aims to unlock the full connectivity and infrastructure potential of the South Caucasus.

Yerevan, Marseille Sign Declaration on Establishment of "Fraternal Ties"



The 30-year partnership between Yerevan and Marseille partnership is expected to gain new momentum after the Mayors of the two countries signed a declaration on establishment of "fraternal ties."

"The interstate relations of Armenia and France are stronger than ever, they are based on the centuries-old friendship and common values of the Armenian and French peoples, and therefore, Yerevan-Marseille cooperation and friendship are also stronger than ever," Yerevan Mayor Tigran Avinyan said as he hosted Mayor Benoit Payan at the City Hall.

Avinyan said the new document strengthens the partnership based on mutual respect, historical memory and a common vision for development.

"Our cities face the same chal-

lenges. Both in Yerevan and in Marseille, we strive to build an effective, cohesive and people-oriented urban environment," noted Tigran Avinyan.

In turn, Marseille Mayor Benoit Payan noted that Yerevan holds a special place for Marseille, and emphasized that the document will provide an opportunity to go further.

"Our cities have intertwined destinies. We will continue to create hand in hand, helping each other, and we must be able to advance our joint solutions that will build our bright future. This declaration should be able to keep Marseille and Yerevan alive. The Armenians who survived the Genocide brought them to France not only their eternal grief, but also their eternal culture," the Mayor said.

Iranian-Armenian Organizations Condemn Incident Targeting Armenian Embassy Delegation at Genocide Memorial Event in Tehran



TEHRAN — Several Armenian organizations operating in Iran have condemned an incident that took place during a commemorative event in Tehran marking the 110th anniversary of the Armenian Genocide. They are calling on other Armenian institutions and the Armenian members of Iran's Parliament to also denounce the act.

The joint statement was issued by the Armenian Sports and Cultural Complex "Raffi," the Iranian-Armenian National and Cultural Union, the Armenian "Ashkharhates" Centers of the Zeytoun and Sasun districts, and the Arax weekly newspaper. It was addressed to the religious and national institutions of the Iranian-Armenian community, their subsidiary bodies, committees, church councils, as well as to the social, economic, cultural, and sports unions and all members of the Iranian-Armenian community.

"As part of the events commemorating the 110th anniversary of the Armenian Genocide, during the annual wreath-laying ceremony in Tehran, the wreath donated by the diplomatic staff of the Armenian Embassy—decorated with the name, flag, and coat of arms of the Republic of Armenia—disappeared from the Genocide Memorial site before the start of the ceremony. It was later found torn apart, with its symbols ripped off and scattered on the ground. During the wreath-laying, as the Armenian Embassy delegation approached the memorial, two or three women suddenly pushed past security guards and lunged toward the delegation, attempting to forcibly snatch the flowers from the Ambassador, his wife, and accompanying offi-

cial by hitting their hands," the statement said.

It further noted that later, a group of individuals began chanting offensive slogans directed at the Armenian authorities.

The organizations called on all Armenian institutions in Iran and the Armenian members of Iran's Parliament to denounce the incident and take action to ensure that such acts are properly addressed.

"The Genocide commemoration ceremonies, which are symbols of our national unity, cannot be turned into their opposite by the immoral actions of ignorant individuals. Those who committed this crime may not understand the gravity of their actions—such people are often incapable of grasping the seriousness of such matters. But it is the serious responsibility of every conscious Armenian to prevent such ugly and ignorant acts.

We, the undersigned organizations, strongly condemn this vile and treacherous act and call upon the two Armenian members of Iran's Parliament—especially Mr. Ara Shahverdyan, who also chairs the Iran-Armenia Parliamentary Friendship Group in the Islamic Consultative Assembly—as well as the Representative Assembly of the Armenian Diocese of Tehran, the Diocesan Council, the organizing committee of the 110th anniversary events, and all Armenians who have a conscience regarding the desecration of national values, to forcefully condemn this incident and to take appropriate measures to ensure it is properly addressed, preventing such misguided actions from continuing," the statement concluded.

Supporting Armenia Means Supporting

Continued from page 1

tal rights enshrined in the Universal Declaration of Human Rights.


In Armenia, freedom of speech and the press are guaranteed under Article 27 of the Constitution of the Republic of Armenia:

"Everyone has the right to freely express their opinion. No one shall be compelled to renounce or change their

opinion. Everyone has the right to freedom of speech, including the freedom to seek, receive, and disseminate information and ideas by any means of information, regardless of state borders.

The freedom of the press and other media is guaranteed. The procedures for the operation and responsibility of mass media shall be defined by law."

Egypt, India, Armenia and More: 7 Oldest Countries that Still Exist – WEON News



While borders and governments change all the time, several regions have retained cultural, political, or societal identities for thousands of years, Indian WEON News writes. It lists the seven oldest countries in the world that still exist, including Armenia.

The other countries on the list are Egypt, Iran, China, San Marino, India and Japan.

"Legends date Armenia's origins to 2492 BCE, but archaeological finds confirm a Bronze Age presence. The Kingdom of Urartu was a key early state. Armenia's adoption of Christianity in 301 CE reinforced its identity, which survived centuries of occupation until independence in 1991," WEON News writes.

List of some of other oldest countries that still exist.

Egypt : Unified around 3100 BCE by King Narmer, the ancient Egypt's organised statehood is marked by the Old Kingdom and its iconic pyramids. Though later it was ruled by Persians, Greeks, and Arabs, but Egypt's civilisational continuity remains strong.

Iran: Iran's roots trace back to the Elamite civilisation around 3200 BCE. It gained prominence through the Achaemenid Empire (550–330 BCE) founded by Cyrus the Great. One of the world's earliest cities, Susa, and enduring Persian culture define Iran's historical continuity. The cultural and political identity of Iran has persisted through various

dynasties, invasions, and transformations, including its modern establishment as an Islamic Republic in 1979.

China: While the debated Xia Dynasty is dated to around 2070 BCE, the Shang Dynasty (c. 1600 BCE) is the earliest confirmed Chinese state according to the records. China's cultural continuity—through its language, philosophy, and its traditions—has persisted despite several dynastic changes and invasions, such as the Mongol conquest in the 13th century.

San Marino: Founded by Saint Marinus in 301 CE, San Marino is often cited as the oldest sovereign republic. It has maintained autonomy through diplomacy and isolation. Its constitution, adopted in 1600, is still in use, making it the world's oldest existing constitutional framework.

India: The Indus Valley Civilisation (c. 2500 BCE) marks the beginning of urban culture in India. The Vedic period shaped early Hindu traditions. Though modern India emerged in 1947, its civilisational heritage—spanning millennia—continues to influence the present.

Japan: Japan's imperial line traditionally begins with Emperor Jimmu in 660 BCE, based on ancient chronicles. While this date lacks archaeological proof, the Kofun period (c. 250 CE) reveals early centralised rule. Japan's monarchy remains the oldest hereditary institution still in existence.

Armenia Significantly Improves Its Ranking

Continued from page 1

editorial policies."

At the same time, the organization acknowledges that despite a pluralistic media environment, Armenian media remains polarized. In its report, released on the eve of World Press Freedom Day, Reporters Without Borders states that Armenia faces an unprecedented level of disinformation and hate speech, driven by domestic political tensions,

border security challenges, and the country's complex geopolitical position between Russia and the European Union.

The state of press freedom in the country was assessed as satisfactory, with Armenia ranking ahead of all its neighboring countries. Moldova follows Armenia, though it has worsened its position this year. Norway has topped the index for several years, while Estonia ranks second this year.


Ձեր ծանուցումները Կատարեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

“Microhistories in Armenian Studies” Vol. 22 Published

FRESNO — The Armenian Studies Program at Fresno State has announced the release of its latest publication, *Microhistories in Armenian Studies*, volume 22 in the Armenian Series of The Press at California State University, Fresno.

Based on five probing papers delivered at an international conference organized by Prof. Barlow Der Mugrdchian of the Armenian Studies Program and Dr. Ümit Kurt in 2023, this volume showcases new themes and innovative approaches in contemporary Armenian Studies: Armenian refugees during the Syrian Great Revolt in 1925-1926 (Victoria Abrahamyan), the life and travails of Ottoman agronomist Ohannes Toros Doumanian (Samuel Dolbee), the economic destruction of Aintab Armenians during WWI (Ümit Kurt), the liquidation of Armenian Community Leaders from Sivas at Kötü Han in 1915 (Robert Sukiasyan), and a reported battle in Morenig, 1915 (Ara Sarafian).

“I was pleased with the original conference in 2023, and even more so with the articles which are appearing in this publication,” said Prof. Barlow Der Mugrdchian of the Armenian Studies Program and general editor of the Armenian Series. “Such projects push the boundaries of Armenian Studies.”



Previous conferences and publications include *The State of the Art of the Early Turkish Republic: Historiography, Sources and Future Directions*, *The Committee of Union and Progress: Founders, Ideology, and Structure*, and *Armenians and Kurds in the Late Ottoman Empire*.

Microhistories in Armenian Studies is available for purchase through Abril Bookstore: <https://www.abrilbooks.com/microhistories-in-armenian-studies.html> or NAASR Bookstore: <https://naasr.org/products/microhistories-in-armenian-studies> or on Amazon.

European People’s Party Congress Adopts

Continued from page 2

Lexmann (Slovakia) and Rasa Jukneviene (Lithuania), also welcomed the Armenian government’s “Crossroads of Peace” initiative.

The EPP highly valued Armenia’s recent adoption of a law concerning the process of Armenia’s accession to the European Union, which lays the foundation for deepening Armenia’s European integration.

“This step reaffirms the Armenian people’s ongoing commitment to strengthening democracy and the rule of law in the country and sets a clear path toward deeper integration with the EU,” the resolution stated.

Additionally, the resolution underscored that continuous political dialogue and reforms in the fields of democracy, rule of law, and human rights remain key tools for bringing Armenia closer to the EU, with the prospect of future membership.

The EPP resolution encourages Armenia to continue its progress in implementing the Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA), including achievements in the field of democratic reforms, while also seeking closer cooperation with EU Member States. The suspension of Armenia’s participation in the Collective Security Treaty Organization CSTO announced in August 2024 and the recent adoption of a bill committing to

a European path for Armenia mark a historic shift of the country’s geopolitical strategy and are clear signs of dedication to engage further in the process of European integration.

“This turning point reflects Armenia’s readiness to disentangle itself from the Kremlin’s orbit and pursue a future aligned with European values. The EPP recognizes these visionary steps, which outline a sovereign, secure and democratic future independent of former imperial dependencies,” the resolution reads.

“We fully support efforts to expand our economic and trade relations in view of decreasing Armenia’s dependency on the Eurasian Economic Union (EEU), and we commend the prolongation of the mandate of the EU’s civilian mission in Armenia (EUMA) as a facilitator of peace and s

The Party recalls the need for remaining prisoners of war to be immediately and unconditionally released, and recalls the guaranteed right of return of the ethnic Armenians to Nagorno-Karabakh. “These steps reflect a genuine commitment to peace, stability and cooperation in the South Caucasus. The release of political prisoners and the creation of robust guarantees for cultural, religious and civil rights across the region would be seen as a natural next phase of the dialogue,” the EPP says.

AGBU DISCOVER ARMENIA
YOUTH PROGRAM

Transformative Cultural and Service Experience for Armenian Youth

An immersive summer experience connecting Armenian youth from around the world with their peers and ancestral homeland, through a combination of cultural exploration, community service, and adventure, while earning 20-60 hours of community service credits.



Construction

Eco-Clean Up

Workshops and Classes

Ziplining

Who Can Join?

Armenian youth from all over the world, ages 15-18, eager to be engaged in the community service projects and immerse themselves in their heritage and culture in the homeland.

Program Dates

Summer Session 1
JUNE 19 - JULY 6

Apply by: MAY | 15 | 2025


Summer Session 2
JULY 30 - AUGUST 16

Apply by: JUN | 15 | 2025

Book Your Spot agbu.org/discover-armenia



Որքա՞ն Կարող Ենք Թիրփերու Հետ Բարեկամանալ



ՃՐՏԳ. ՀԱՍԲԱՐՁՈՒՄ ԱՂԱՇԵԱՆ

Խօսքը կը վերաբերի Հայաստան - Թուրքիա բանակցութիւններուն, որոնք երկար ժամանակէ ի վեր տեղի կ'ունենան այս երկու անհաւասարակշիռ երկիրներու միջեւ, մեր հայրենիքին եւ մեր թշնամիին միջեւ, յարաբերութիւնները բնականոն վիճակի վերածելու համար:

Թուրքիա մեծ երկիր մըն է, հսկայ բանակի տէր, որուն քիթը մտած է Սուրիոյ մէջ նմանապէս իրաքի, Լիպիոյ եւ այլուր. ան 85 միլիոն բնակչութեամբ ու ընդարձակ 783,603 քառակուսի քիլոմետր հողամասով երկիր մըն է եւ հսկայ տնտեսութեան տէր, թէեւ կող, սակայն իր գոլոգ նախագահով իր տեղը պահանջում է ՆԱԹՕ-ի երկիրներու մէջ եւ տարածքին մէջ:

Իսկ Հայաստանը հազիւ 3 միլիոն բնակչութեամբ, եւ 29,743 քառակուսի քիլոմետր հողատարածքով, որ օր օրի կը պակսի Ատրպէյճանի անսահման պահանջներով, ան իր սահմանափակ եկամուտի աղբիւրներով եւ տկար դիրքով կը տառապի իր վայրագ թուրք դրացիներէն. Հայաստանը ուժեղ դաշնակիցներու կարիք ունի գազանին դէմ կանգնելու համար, սակայն ո՞վ պատրաստ է քաղաքական այդ դերը կատարելու, ինչո՞ւ եւ ի՞նչ շահ սկսկալելով:

Ահաւասիկ անհաւասարակշիռ բանակցութիւններ, որոնք կը ստիպեն տկար կողմը՝ Հայաստանը, շարունակ գիշտուներ ընէ եւ Թուրքիան աւելին կը պահանջէ մինչեւ որ հասանք մեր սահմանած ԿԱՐՄԻՐ գիծին, ցեղասպանութեան, որ անկարելի է գիշտի:

Խօսքը 1915 թ. Հայոց Ցեղասպանութեան մասին է, որ պատահեցաւ (1915-1923) տարիներու ընթացքին եւ պատճառ դարձաւ մէկ ու կէս միլիոն հայերու ոջնջացման Օսմանեան կայսրութեան ներս:

Մեծ թիւով երկիրներ ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը եւ դատապարտած են Թուրքիան, անոնց շարքին մեծ պետութիւններ ինչպէս ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Գանատա, Արժանթին, Հոլանտա, Շուէցարիա եւ տասնեակ այլ երկիրներ: Նոյնիսկ Թուրքիան էրտողանի լեզուով ընդունած է հարիւրաւոր հազարներով հայերու ոջնջացումը այդ շրջանին, սակայն Թուրքերը այդ եղածին

պատճառը վերագրած են պատերազմին, սովին եւ համաճարակներուն:

Մենք հայերս երբեք փաստերու կարիք չունինք, որովհետեւ 1.5 միլիոն փաստ ունինք, զո՞ս ունինք:

Երբ ներկայիս աջէն ձախէն ձայներ կը բարձրանան եւ կը պնդեն թէ Ցեղասպանութիւնը անցեալին կը պատկանի, կամ կը մեղմացնեն անոր ազդեցութիւնը եւ անտարբեր կը մնան եղածին հանդէպ, ինչ հոգեկան խանգարումի մէջ պէտք է ըլլան այդպիսի մարդիք:

Մենք այդ մէկը մեր մորթին վրայ զգացած ենք, ամէն մէկ մամիկ ու պապիկ իր պատմութիւնը ունի, ինչ խիղճով պիտի կարողանայ որեւէ անհատ այդ ողբերգութիւնները ուրանայ եւ անտեսէ, նոյնիսկ եթէ այն քաղաքական շահերու համար ըլլայ: Եւ որո՞ւ սիրուն համար, որո՞ւ շահին համար, Թուրքերո՞ւն, մեր դարաւոր թշնամիին համար:

Թուրքը թուրք է, չէ փոխուած եւ կարելի չէ որ փոխուի: Եթէ քաղաքականութիւնը եւ հարեւան երկիրներ ըլլալը մեզմէ կը պահանջեն, եւ աւելի ճիշդը կը ստիպեն որ այդ թշնամի հարեւանին մօտենալ եւ անոր հետ գործակցիլ, պէտք է լաւ մտածել եւ պատրաստուիլ անոր դէմ եւ զգուշութեամբ գործակցիլ անոր հետ:

Թուրքերը մեծամասնութեամբ ցեղապաշտ մարդիկ են: Որոշ հոգեբաններ ցեղապաշտութիւնը (racism) հոգեկան հիւանդութիւն կը համարեն, որ մտաբուժութիւն, ջղատապաբուժութիւն (psychotherapy) կը պահանջէ:

Թուրքերը մեծ հայրերը, որոնք (Քայի) տոհմէն են (Kayi tribe), եւ (Օղուզ) թուրքմենական ցեղերէն մէկն են, (Oghuz Turks), ցեղապաշտութեան եւ խտրականութեան արմատները իրենց հետ բերած են երբ գաղթած են դէպի արեւմուտք՝ դէպի Անատոլիա 1123 թ. այդ գաղափարները անոնց մտքերուն մէջն էր եւ հոգիներու հետ շարուած:

Սակայն այդ գաղափարները սաստկացան եւ խրոնոցան Օսմանեան կայսրութեան վերջին շրջաններուն, երբ 1860-ական թուականներուն որոշ օսմանցի թուրք մտաւորականներ, օրինակ՝ (Ալի Սուլայի)ն, յայտարարեցին,




Ալի Սուլայի

որ թիւրքերը քաղաքական, ռազմական եւ մշակութային առումներով կը գերազանցեն միւս ցեղերուն:

Ալի Սուլայի (1839- 1878)
Օսմանեան թուրք քաղաքական գործիչ, լրագրող, մանկավարժ, եւ մոլեռանդ թուրք կրօնասէր էր: Ան Օսմանեան ժամանակաշրջանի առաջին Բան-Թուրքիզմներէն (PanTurkism) էր: Միւսը Ջիա Քոյք Ալպըն էր:

Ջիա Քոյք Ալպ (1876-1924)
Ջիա Քոյք Ալպը, թրքական ազգայնականութեան ծայրայեղականներէն առաջին մէկն էր, թրքական ազգայնական տեսաբան եւ Օսմանեան ընկերաբան էր (sociologist): Եղած է գրող, բանաստեղծ եւ քաղաքական գործիչ, ինչպէս նաեւ ծայրայեղ թուրքական շարժման հայրերէն մէկը: Ան նաեւ յայտնի էր որպէս «Թուրքական ազգայնութեան հայր» եւ ընդունած էր «Բանթուրքիզմ» գաղափարը: 1919 թ. ան իր մէկ յօդուածով յայտարարած է, թէ թուրքերը արտասովոր մարդիկ են եւ կոչ ըրած է թուրքացնել Օսմանեան կայսրու-



Ջիա Քոյք Ալպ

թիւնը՝ թրքերէն լեզուն եւ մշակութիւնը պարտադրելով Օսմանեան կայսրութեան բոլոր քաղաքացիներուն: Ջիա Քոյք Ալպ կը համարուի Հայոց Ցեղասպանութեան պատճառ դարձած գաղափարական ուժի բանալին, որուն նպատակն էր բնաջնջել հայ ազգը եւ այդ պատճառով 1919 թ. ձերբակալուած է անգլիացիներուն կողմէ եւ դատապարտուած է Հայոց Ցեղասպանութեան մեղադրանքով ու աքսորուած Մալթա կղզի: Վերադարձած է Պոլիս, իսկ 1923 թ. Աթաթուրքին կողմէ ընտրուած է որպէս Տիարպէքիւրի Ազգային մեծ խորհուրդի ներկայացուցիչ: Մահացած է 1924 թուականին Պոլիսի մէջ:

Թալեաթը, էնվէրը եւ ճամալը յագեցած են անոր գաղափարներով, իսկ Քեմալ Աթաթուրքը ընդունած է Գյոք Ալփի եւ Օսմանեան թուրք այլ ազգայնական մտածումներու ծայրահեղ գաղափարները, խորացած է անոնց մէջ, զարգացուցած եւ ներդրած է 1923 թ. Հոկտեմբերի 29-ին հռչակած ժամանակակից թուրքիոյ Հանրապետութեան սահմանադրութեան մէջ: Ըստ Աթաթուրքին՝ Թուրքիոյ մէջ

Շար.ը էջ 15

Homenmen Ladies Auxiliary

Mother's Day Celebration

Luncheon & DJ

Of all the special joys in life,
The big ones and the small,
A mother's love and tenderness
Is the greatest of them all.

Love You
mom
Happy Mother's Day

SATURDAY MAY 10, 2025
11 AM

Special Guest Violinist
Shant Tanielian

RSVP
Karine 818-324-0574
Knarig 626-491-7899
Donation \$100

JAAAAAN RESTAURANT
145 N ARTSAKH AVE, GLENDALE, CA 91206

Մահուան 125-Ամեակ՝ Յովհաննես Այվազովսքիի

ՅԱԿՈՒ ՏԻՆԵԱՅԵԱՆ

2 Մայիս 1900-ին՝ 125 տարի առաջ, համայն հայուլթիւնը մասնաճորտապէս եւ միջազգային գեղանկարչական արուեստի ընտանիքը ընդհանրապէս, կորսնցուցին համաշխարհային չափանիշով 83-ամեայ իրենց տիտանը՝ հայագրի ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիին (1817-1900, աւագանի անունով՝ Գէորգ Այվազեանի որդի Յովհաննէս): Այսպէս, ուղեղային արիւնախրուածի հետեւանքով կը վախճանէր աշխարհահռչակ ծովանկարիչը, եւ իրիմի թերակղզիի ողջ թէնդոսիան՝ Այվազովսքիի ծննդավայրը, Հայոց Ս. Սարգիս եկեղեցիէն գինուորական մեծ շուքով կատարուած յուղարկաւորութեամբ մը յաւիտենական փառքի պատուանդանին կ'արժանացնէր իր հանձարեղ գաւակը:



եան կամ Օհաննէս Այվազեան, ամբողջ յուզաշխարհ մը յաւերժացուցող ծովու ալիքներու խորհուրդէն դուրս բերուած բիւրաւոր բրաբիոններէ, անոնց բազմազունեան ու անանց ստուերախաղերուն մէջէն Անհունին երգը վրձնի վարպետութեամբ ու Աստուծո՛յ ձայնով կարկառելով մեզի: Միեւնոյն ատեն ինք ալ միաձուլուած կատաղանքին մէջ կոհակներուն վեհամբոստ՝ ան կտաւ առ կտաւ ձօնեց մեզի իր անմահ գործերը, անոնց մէջ դնելով իր քանքարափայլ իմաստնութիւնը տիեզերագնաց.- «Նոյը Կ'իջնէ Արարատ Լեռէն», «Պայրընի Այցը Միսիթարեաններուն՝ Ս. Ղազար Կղզի», «Հայ ժողովուրդին Մկրտութիւնը», «Հայերու Ջարդը Տրա-

ֆեթերսպուրկի Գեղարուեստի Ակադեմիան՝ աւարտելով 1837-ին: Նոյն տարին իր «Անդորր» անուն նկարին համար ան իր կեանքին մէջ առաջին անգամ կ'արժանանայ պարգևի՝ Ակադեմիայի Բարձրագոյն մրցանակին՝ Ոսկէ մետալի ու երկու տարուան համար իրիմի մէջ նկարչութեամբ պարապելու ուղեգիրի: Այստեղէն կը սկսի ապագայ մեծ ծովանկարիչին գեղարուեստական ստեղծագործական վերելքը...: 1840-ին, առ ի գնահատանք իրիմեան ժամանակաշրջանի

գլուխ-գործոցներու իւրովի ուսումնասիրման մէջ: Այս շրջանին է որ Այվազովսքի կը մասնակցի յատկապէս Փարիզի եւ Ամսթերտամի մէջ նկարչական հեղինակաւոր ցուցահանդէսներու՝ տիրանալով միջազգային մրցանակներու եւ արժանանալով ակադեմիական կոչումներու, որոնց ան տէր կանգնեցաւ մինչեւ մահ՝ շարունակ վերահաստատման ու նորովի մեծարման փառք վաստակելով իր անունին շուրջ:



«Պայրընի Այցը Միսիթարեաններուն՝ Ս. Ղազար Կղզի» - գործ՝ Յովհաննէս Այվազովսքիի:

իր ստեղծագործական իրագործումներուն, Ս. Փեթերսպուրկի Ակադեմիան գինք կ'ուղարկէ արտասահման՝ ինքնակատարելագործման հնարաւորութիւններ ընձեռելով երիտասարդ արուեստագէտին, որ կ'այցելէ Իտալիա՝ Ս. Ղազար, Սպանիա, Ֆրանսսա, Անգլիա, Հոլանտա եւ ամէնուր մօտէն կը ծանօթանայ ժամանակի եւրոպացի մեծ նկարիչներուն հետ, կը խորանայ նկարչական արուեստի

1844-ին ան կը վերադառնայ Ռուսաստան, կը ստանայ Ռուսական Գեղարուեստական Ակադեմիայի (ՌԳԱ) ակադեմիկոսի կոչում (1887-էն՝ անոր պատուաւոր անդամը), կը նշանակուի Ծովային ընդհանուր շտապի գեղանկարիչ: 1845-ին վերջնականապէս բնակութիւն կը հաստատէ

Շար.ը էջ 15



«Նոյը Կ'իջնէ Արարատ Լեռէն» - գործ՝ Յովհաննէս Այվազովսքիի

կը խառնուին ծովուն կատաղի կոհակներուն ու ալիքներուն...: Ապրելով ռուսական կայսրութեան տիրապետութեան տակ կամ ռուս միջավայրի մէջ, ան ստիպողաբար Այվազեան մականունին հայերէնը գիշած է ռուսակերտ վերջաւորութեամբ Այվազովսքի մականունին: Այն միջավայրին, որուն ծովուն ու բնութեան, երկինքին ու լուսինին հետ ծովանկարիչին մոնազի մենախօսութիւնը յետագային իրեն պիտի բերէին համաշխարհային համբաւ, հարկաւ առանց պարտկելու իր Հայկեան Հանձարին ճառագայթները՝ իր հայ ծնողներէն հայկականութեամբ շնչաւորուած ըլլալու, հայեցի դաստիարակութեամբ թրծուած ըլլալու իրողութիւնը:

Եւ այս օրերուն, թէնդոսիա նաւահանգիստին պէս կը հեծեծեն աշխարհի շատ խաղաղաւէտ նաւահանգիստներն ու քաղաքները: Միւս կողմէ իրենց անգնատեսիլ ամայքը կու լան քաղաքակրթութեան բիւրաւոր ոստաններ:

Յիրաւի, Յովհաննէս Այվազ-

պիզոնի Մէջ, 1895-ին», «Խրիմեան Հայրիկը էջմիածնի Շրջակայքը», «Հայ Մարտիկի Երդու մը», «Թրքական Նաւերը Մարմարա Ծով Կը Թափեն Հայերը» եւ աւելի քան 6000 ձեռակերտ նկար հաշուող մեծարժէք ժառանգութիւն մը՝ կտակելով համաշխարհային գեղանկարչական գանձարանին:

Այսպէս է որ հին յունական գաղթավայր, նախկին ուքրանական, այժմ փութինեան ռուսական տիրապետութեան կամ բռնակցման անցած թէնդոսիա նաւահանգիստը մեծցաւ ու աշխարհահռչակ դարձաւ շնորհիւ Այվազովսքիին, որուն անունով 1880-ին բացուած պատկերասրահը, մինչեւ այսօր դէպի այդ քաղաքը կ'առաջնորդէ քայլերը բոլոր անոնց, որոնք ծովու անունը խորհուրդով հաղորդուելու տենչը ունին:

Պատանութեան տարիներուն՝ 1830-1833, Յովհաննէս Այվազովսքի կը յաճախէ Միմֆերոպոլի ռուսական երկրորդական վարժարանը, անկէ ետք չորս տարի ալ՝ Ս.



ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

AEBU SCHOLARSHIP PROGRAM

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2025

For eligibility and to apply, visit our website
WWW.AEBU.ORG



Questions? Call 626-344-7321



AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

Ողջունելի Նախաձեռնութիւն Սը Սահակ Մեսրոպ Քրիստոնեայ Վարժարանի 45 Ամեակին Առթիւ



Դպրոցի աւանդութեան կառ-
չելով Փաստինայի Սահակ Մես-
րոպ Հայ Քրիստոնեայ վարժարա-
նը, անցեալին յատուկ միջոցա-
ռումներով, նշած է իր հիմնադրու-
թեան տարեդարձը: Սակայն այս
տարուանը՝ տարբեր էր: Ան տեղի
ունեցաւ անցեալ կիրակի, Մայիսի
4-ին, 2025 կրկնորդէլի Stars on
Brand-ի շքեղ սրահին մէջ, շուրջ
250 հոգիներու ներկայութեամբ:
Արդարեւ, յիշեալ վարժարանը՝ իր
անմիջական շրջապատի տունե-
րով, ամիսներ առաջ, լայնածաւալ
ահարկու Eaton հրդեհի մը գոհ
գացած էր, ամայացնելով պանծալի
կրթօճախն ու յարակից համայնա-
պատկերը:

Սոյն միջոցառումը՝ Սահակ
Մեսրոպ կրթական հաստատութեան
համար, տօնական տեսք ունէր,

եկաւ ճաշկերոյթի նախապատրաս-
տական կոմիտէի ատենապետուհի
Թաթիանա Համբարձումեանը: Այ-
նուհետեւ հանդիսավարուհի Սոնա
Մովսէսեան, յետադարձ ակնարկով
մը անդրադարձաւ դպրոցի արձա-
նագրած յաջողութիւններուն եւ
ձեռքբերումներուն մասին: Մինչ
այդ՝ ներկաները հեռատեսիլի պաս-
տառներուն վրայ շարունակաբար
դիտեցին ցուցադրուած դրուագ-
ներ, դպրոցի ուսումնական կեան-
քէն:

Օրուան մեծայարգ հիւրերէն
ԱՄՆ-ի գոնկրէսի անդամ ձիւտի
Չուն ելոյթ ունենալով արժեւորեց
կրթութեան ոլորտին ներս տրուած
կարեւորութիւնը եւ բարձր գնա-
հատեց ուսուցիչներու նուիրումը
նոր սերունդներու դաստիարակու-
թեան առաքելութեան մէջ:



քանի որ դպրոցը՝ փլինիկի նման,
կրկին հասակ առած էր, ժամանա-
կաւոր կերպով իր գործունէու-
թիւնը շարունակելու ՀԲԸՄ-ի
շրջանի կրթա-մշակութային եւ
մարզական համալիրին մէջ:

Երեկոյթը յիշարժան էր որ-
պէս տօնական, քանի որ չարագու-
շակ եւ սարսափազդու հրդեհն
այլեւս պարտուած էր: Դպրոցա-
գուրկ աշակերտներուն նոր հնա-
րաւորութիւն մը ստեղծուած էր
ՀԲԸՄ-ի հայրենանուէր հաստա-
տութեան մէջ, առժամեայ դրու-
թեամբ իրենց կանոնաւոր դասերն
սկսելու: Երեկոյթ մը՝ որ մեծ
գոհունակութիւն ստեղծեց բոլորին
մօտ:

ԱՄՆ-ի եւ Հայաստանի գոյգ
քայլերգներու ունկնդրութենէն ետք
տեղի ունեցաւ սեղաններու օրհնու-
թիւն, որմէ ետք գործադրուեցաւ
օրուան պատշաճ յայտագիր մը:
Ողջոյնի ջերմ խօսքերով հանդէս

Համադամ ճաշերու ընթրի-
քին՝ մթնոլորտը խանդավառեց
Element Band-ը: Ապա 45-ամեակի
նուաճումներու եւ յետագայ ծրա-
գիրներու յաջողութեանց իր բա-
րեմադրութիւններն արտայայտեց
Վեր. Մանօ Ակիւլեան: Ան Pas Naz
եկեղեցիի անունով 70 հազար տո-
լար նուիրեց Սահակ-Մեսրոպ վար-
ժարանին:

Սահակ Մեսրոպի «Քրիսթին
Ս. Սարեան Նախադպրոցական եւ
Մանկապարտէզ» բաժնի բարերար
Տոքթ. Մայք Սարեան, խօսք առնե-
լով բարձր գնահատեց դպրոցի
հոգաբարձութեան եւ կրթութեան
պատասխանատուներու ներդրում-
ները եւ առ ի քաջալերութիւն
25,000 տոլար եւս նուիրեց:

Դպրոցի անօրէններու խոր-
հուրդի փոխ ատենապետ Վաչէ
Իւրեճեան համապարբակ գեկոյցով
մը, հանդէս եկաւ սոյն կրթական
հաստատութեան, ֆինանսական

Գիտակից Մայրը (Մայրերու Օրուան Առթիւ)

ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՅԱՆ Յ.
ԹՈՒԹԻԿԵԱՆ

Մայրերու Օրը՝ նուիրական
տօն մըն է քաղաքակիրթ ազգերու
կեանքին մէջ, որովհետեւ մայրու-
թիւնը նուիրական կոչում մըն է:
Կենդանական եւ մարդկային կեան-
քի մէջ մայրութիւնը գեղեցիկ
հմայք մը ունի: Մայրեր իրենց
մարմինը պատսպարան կը դարձ-
նեն ծնելիք էակներուն, ծնունդ
կուտան անոնց, կը գուրգուրան
անոնց վրայ եւ կը խնամեն գա-
նոնք:

Սակայն, հարկ է անմիջապէս
հաստատել, թէ մայրանալ, ծնունդ
եւ սնունդ տալ բաւական չեն լի-
իրաւ մայր ըլլալու համար: Մայ-
րութիւնը վսեմ եւ աստուածային
կոչում մըն է: Այն մայրը որ այդ
կոչումով կ'ապրի առաքինի մայր
մըն է: գիտակից մայրը սիրոյ,
նուիրումի եւ գոհաբերութեան
մարմնացումն է: Անոր սիրտը աստ-
ուածային սիրոյն հայելին է, որ
սիրով կը բաբախէ եւ սէր կը
յորդէ-սէր որ անընկճելի զօրու-
թիւն մը ունի, որ ոչ մէկ ուժ կրնայ
նուաճել գայն:

Գիտակից մայրը կը նմանի
արբանեակի մը, որ իր լոյսը կը
ստանայ լուսոյ աղբիւր արեգակէն
եւ կը ցոլացնէ գայն: գիտակից
մայրը իր սէրը կը ստանայ սիրոյ
աղբիւր եղող Աստուծոյն եւ գայն կը
ցոլացնէ իր մանկան վրայ: Ան կը
հետեւի իր հոգեհատորի կեանքի
քայլերուն անոր սաղմային հանգր-
ուանէն մինչեւ այն օրը երբ դեռ իր
սիրտը կը բաբախէ:

Գիտակից մայրը այն ազն-
ուական կինն է, որ Աստուածա-
շունչը ձեռքին, կուրծքին սեղմած
իր գաւակը կը մեծցնէ աղօթքով եւ
Աստուծոյ շունչով: Ան միշտ կը
գոհ է եւ կը գոհուի, անսահման
սիրով, գուրգուրանքով եւ համբե-
րութեամբ կը նուիրէ իր կեանքը
համակ:

Գիտակից մայրը իր գաւակին

առաջին եւ մեծագոյն դաստիա-
րակն է՝ կեանքի առաջին դպրոց
եղող տան մէջ: Անոր խաղցած դերն
ու ազդեցութիւնը խիստ բախտո-
րոջ եւ ճակատագրական են, մանա-
կանդ կեանքի կազմաւորման տա-
րիներուն: Եթէ իրօք կեանքի ամե-
նէն տպաւորիչ դասերը կ'աւանդ-
ուին մանկական մատղաշ տարինե-
րուն, այն ատեն անվարան կարելի
է ըսել, գիտակից մայրերն են, որ
իրենց ձեռքերուն մէջ կը կրեն
մարդկային ընկերութեան ճակա-
տագիրը:

Գիտակից մայրերը իրազեկ
են այն իրողութեան, թէ իրենց
գաւակները հին դարերէն ներկայ
ժամանակներու երկարող շղթայի
մը օղակներն են: Եւ իրենց կոչումն
ու առաքելութիւնն է ընտիր նկա-
րագրի տէր, բարոյական եւ հոգե-
ւոր սկզբունքներով օժտուած գա-
ւակներ պատրաստել ազգին ու
մարդկութեան: Յարգանքի եւ մե-
ծարանքի արժանի են այն բոլոր
գիտակից մայրերը որոնք իրենց
գաւակներուն ֆիզիքական, մտա-
ւոր եւ հոգեւոր զարգացումին կը
սատարեն:

Մայրերու Օրուան առիթով
կը խոնարհինք մեզմէ մարմնապէս
անդարձ մեկնող մայրերու յիշա-
տակին առջեւ եւ յարգանքի, սիրոյ
եւ որդիական ջերմ զգացումներով
կ'ոգեկոչենք իրենց անմեռ յիշա-
տակը:

Մայրերու Օրը նաեւ դիպուկ
առիթ մըն է մեր անխառն յարգան-
քի եւ սիրոյ տուրքը ընծայելու՝
ապրող բոլոր առաքինի մայրե-
րուն, որ գիտակից են իրենց մայ-
րութեան կոչումին:

Մայրերու Օրը, ինչպէս նաեւ
տարուան ամէն մէկ օրը, երախտա-
պարտ գաւակներ, այլեր եւ ընտա-
նիքի անդամներ իրենց յարգանքն
ու սէրը մատուցանելու են եւ
«երանելի» կոչելու են այն անձն-
դիր, գոհաբերող եւ գիտակից հա-
կը, որ կը կոչուի ՄԱՅՐ:

իրավիճակին եւ յառաջիկայ վե-
րակառուցման աշխատանքային
ծրագիրներուն մասին: Նախատես-
ուած հաշիւներուն մասին արժեւոր-
ումները կը հասնին 15 միլիոն
տոլարի: Հիւր երգչուհի Արաքսիա
Ամիրխանեան իր ժողովրդային
երգերով խանդավառեց ներկանե-
րը:

Սահակ Մեսրոպ վարժարանի
շրջանաւարտներու անունով ելոյթ
ունեցաւ Արի Էքմէքճեան: Ան իր
դպրոցական օրերու տպաւորու-
թիւնները յիշելով, երախտագի-
տութիւն յայտնեց նկարագիր կեր-
տող դաստիարակներուն:

Գնահատանքի ելոյթներով
հանդէս եկան Արեգ Օհանեան եւ
Աննա Պապայեան (ներքին տեսուչ):
Յատուկ յիշատակութեան արժա-
նացան Արլին Թիթանեան, Մարալ
Արոյեան-Պոյաճեան եւ Աննա Պա-
պայեան: Յատուկ մրցանակներու
արժանացան նաեւ խումբ մը ու-
սուցիչներ:

Փակման խօսքով հանդէս եկաւ
Տիկլինանց Խորհուրդի ատենապե-
տուհի՝ Արլին Թիթանեան: Ան
երախտագիտական զգացումներով

արտայայտուեցաւ ՀԲԸՄ-ի դեկա-
վարութեան որ իր դռները լայն
բացաւ մեր դժուարին օրերուն՝
գրկաբաց ընդունեց մեր դպրոցի
սան-սանուհիները: Ծնորհակալու-
թիւն յայտնեց նաեւ հոգաբարձու-
թեան, ուսուցչական կազմին եւ
բարերարներուն, հովանաւորներուն,
որոնք դպրոցին սատար հանդիսա-
ցան կարելի բոլոր միջոցներով: Ան
կոչ ուղղեց նաեւ միշտ նեցուկ
կանգնիլ մեր կրթական հաստա-
տութիւններուն, որպէսզի ան ան-
սասան մնայ միասնական աշխա-
տանքներու շնորհիւ:

Ստեղծուած խանդավառ
մթնոլորտը շարունակուեցաւ մին-
չեւ ուշ գիշեր: Տեղի ունեցաւ նաեւ
նուիրահաւաք եւ վիճակահանու-
թիւն (տոմսը՝ հազար տոլար):
Ներկաները սրահէն բաժնուեցան
բարձր տրամադրութեամբ եւ բա-
րենպատակ ձեռնարկի մը գործնա-
պէս աջակցած ըլլալու հաճելի եւ
լաւատես տրամադրութեամբ:

Մեր շնորհաւորութիւնները
գեղեցիկ եւ օգտաշատ նախաձեռ-
նութեան համար:

Գ.Մ.

Հայոց Ցեղասպանութեան 110 Ամեակի Ոգեկոչման Երեկոյ Պոլսահայ Միութեան Սեշ



ՄԱՐԻԹ Ս. ՕՅԱՆԵՍ

Կիրակի, Ապրիլ 27, 2025ին, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան, տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 110րդ տարելիցի ոգեկոչման երեկոյ՝ Պոլսահայ Միութեան կեդրոնը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Միութեան Հոգաբարձու եւ Մշակութային Յանձնախումբի փոխատենայետ՝ Կարպիս Սարաֆեան, որ ոջունեց բոլորը, օրուան դասախօսուհին եւ հիւրերը, ապա հրաւիրեց Միութեան Հոգաբարձութեան ատենադպրուհի՝ Անահիտ Գոճայեանը որպէսզի հանդիսավարէ եւ սրտի խօսքը փոխանցէ:

Տիկ. Գոճայեան յայտնեց թէ տրուած ըլլալով որ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանը անհանգիստ է՝ այսօր ինք կը փոխարինէ գայն: Տիկ. Գոճայեան շեշտեց թէ Արեւմտաքի երկիրներուն կողմէ մոռցուած ցեղասպանութեան յիշատակումը վերականգնելու համար հայութիւնը աշխարհով մէկ՝ Սփիւռքի տարածքին ամէն տարի կը

նա Ալեքսանեանի հակիրճ կենսագրականը: Որմէ վերջ հրաւիրուեցաւ օրուան դասախօսուհին որ շնորհակալութիւն յայտնեց իրեն այս առիթը ընծայուած ըլլալուն համար, ապա սկսաւ խօսիլ Ցեղասպանութենէն վերապրողներուն մասին, պատահին վրայ ցոյց տալով քարտէսը որ կը ներառէր այն բոլոր քաղաքները ուր հայերը կ'ապրէին: Սեւ ծովու կից Տրապիզոն նահանգը որ կարեւոր նահանգ էր արեւելահայերու եւ արեւմտահայերու համար: Ան յայտնեց թէ հանգուցեալ ցեղասպանագետ Փրօֆ. Վահագն Տատրեան շատ հետաքրքրուած էր ոճրագործներով եւ պատահական չէր որ ան հակապահան թղթապանակներ հաւաքած էր եւ ունէր հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն թրքերէն եւ զանազան լեզուներով լեցուն արխիւ սոյն ոճրագործներուն մասին:

Պէտք է յիշել թէ Տրապիզոնի տարբեր աղբիւրները տարբեր տեղերէ եկած են: Գաւառացի աղջիկներուն ճակատագիրն էր որ երեխաներուն անունը, կրօնքը փոխել եւ թրքացնել զանոնք: 1916ին Ռուսերը գրաւեցին Տրապիզոնը, ուր հայեր մնացած չէին այլ՝ միայն իսլամացած հայեր որոնք թուրքերուն տուները կ'ապրէին: Դասախօսուհին բացատրութիւններ տուաւ թէ ինչպիսի ճակատագրի կ'արժանանային աքսորեալները: Ուրեմն անոնք մէկ օր հետիոտն ճամբորդելէ ետք կը հասնէին Կիւմիշհանէ ուր կը գտնուէին եւ կը զրկուէին անյայտ ուղղութեամբ, այրերը կը ջարդուէին իսկ կանայք եւ երեխք կը քշուէին դէպի Երզնկայի կողմերը եւ ոչ մէկ Տրապիզոնցի Մուսուլ չհասան այլ՝ մահացան: Տուները փակուած, այրերը կը սպաննուէին եւ կը տարուէին կարմիր մահիկի հիւանդանոցը: Իսկ աղջիկներն ու կանայք մէկ տարի պարբերաբար սեռական բռնութիւններու կ'ենթարկուէին իթիհատականներու եւ իրենց ընկերներուն կողմէ: Ինչպէս Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերը, Տրապիզոնի հայերը 1915 թ. Յունիսին ստացան արտաքսման պաշտօնական հրաման: Այնուամենայնիւ, մոտ 3000 երեխայ (մինչեւ 15 տարեկան աղջիկներ եւ մինչեւ 10 տարեկան տղաներ) եւ մի քանի տասնեակ կանայք մնացին քաղաքը: Այդ հայերը տեղաւորուեցան յատուկ հաստատութիւններու մէջ, ենթարկուեցան անտեսման, սովի, սպանութիւններու եւ բռնաբարութեան: Սեռական բռնութիւնը հպատակութեան եւսարսափի, նուաստացման, ինքնատեացութեան եւ խարանման խթանման գործիք էր: Չորս տարի անց բոլոր արու գաւակները անհետացան, իսկ հիմնա-

կանին մէջ ողջ մնացած աղջիկները թրքական տուններուն մէջ առնուեցան, որոնց կը նուիրուէին կամ կը վաճառուէին ծառայելու որպէս ծառաներ կամ ստրուկներ:

Կար նաեւ 700 հոգի որոնք մնացին սարերուն վրայ մինչեւ որ Ռուսական զօրքը եկաւ եւ տեղափոխեց զանոնք Տրապիզոն: 1916ին երբ հայերու օգնութեամբ գրաւեց Տրապիզոնը կը բացայայտուէր որ հայ չէր մնացած, ուստի կը կազմուէր Տրապիզոնի հայկական կոմիտէն ուսուերուն հետ որոնք այնքան ալ ոգեւորուած չէին որպէսզի որբերը հաւաքեն ընդհարում չունենալու համար իսլամ տարրին հետ: Ոչ մէկ իսլամ չէր ուզեր յանձնել հայ կանայքը եւ հայերը չյանձնեցին իրենց գէնքերը: Մինչեւ 1917 թուականը յաջողեցան 200 որբեր հաւաքել եւ զրկել Պաթում իսկ անոնք որոնք հարազատներ ունէին

պահ՝ ներկաներուն կողմէ: Ապա խօսք առաւ Միութեան Գործադիր Յանձնախումբի նախագահ՝ Հերման Չէլիք որ շնորհակալութիւն յայտնեց բոլորին ներկայութեան համար: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ ըսելով թէ սոյն ձեռնարկը ոչ միայն լոյս սփռեց հայ ժողովուրդի պատմութեան ամենատխուր էջերէն մէկուն վրայ, այլ՝ համայն մարդկութեան ամօթալի պատմութեան վրայ: Անցնող շաբաթներու ընթացքին, Պոլսահայ Միութիւնը մասնակից դարձաւ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկներուն որոնք կազմակերպուած էին Հայոց Ցեղասպանութեան 110ամեակին առթիւ, համագործակցութեամբ UACLA եւ AGC կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ: Այսօր շատ կարեւոր է յիշել մեր ժողովուրդին դէմ գործուած ոճիրները եւ հասկ-



Պոլսա՝ հոն ուղարկուեցան: Հիմնականին մէջ ամբողջ Տրապիզոնէն 700 վերապրող կար եւ անոնց յուշերը հաւաքագրած էր Յովակիմ Յովակիմեանը որ սարերուն վրայ գտնուած որբերէն մէկն էր եւ այդ արխիւը կը գտնուէր Եղիշ Չարենց թագարանին մէջ:

նալ անոր դրդապատճառները, որպէսզի աւելի լաւ ըմբռնենք ներկայ օրերուն հայերուն եւ մարդարարածին հանդէպ ուղղուած ոճիրներուն վայրագութեան լրջութիւնը: Տիրար Հերման Չէլիք կոչ ուղղեց զարգացնել մեր համագործակցութիւնը իրար հանդէպ:

Դասախօսութեան աւարտին տեղի ունեցաւ հարց պատասխանի

Շար.ը էջ 15



նախաձեռնէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն:

Ապա բոլորը հրաւիրեց յտորնկայս վայրկեան մը մեր յարգանքի տուրքը մատուցանելու Եղեռնի նահատակներուն հոգիներուն, ինչպէս նաեւ նահատակ Սեւակ Պալլաքճըի յիշատակին, երբ ան իր պարտադիր գինուորական ծառայութիւնը կը կատարէր Պաթմանի Բոզլուք շրջանին մէջ:

Ապա հրաւիրեց Միութեան Ընդհանուր Ժողովի Հայերէն բաժնի քարտուղարուհի՝ Թամար Եշիլիմէնը որպէսզի ընթերցէ դասախօսուհի Դոկտ. Ան-




AGBU LA Special Events Committee & Tekeyan Cultural Association, LA Chapter are honored to Invite you to a lecture by renowned Attorney

ROUPEN AVSHARIAN

"Syria - Post Assad Environment & the Syrian Armenians"

Սուրիա: Յետ-Ասատեան Իրավիճակն ու Սիրիահայութիւնը

THURSDAY, MAY 15, 2025 AT 7:00PM
 AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN CULTURAL CENTER
 2495 E MOUNTAIN ST., PASADENA, CA 91104
 Reception to follow - Free Entry . Հիւրասիրութիւն - Մուտքը ազատ

Յովհաննէս Այվազովսքի

Շարունակուած էջ 12-էն

իր ծննդավայրը՝ Թէոդոսիա, ուր աշխուժօրէն կը լծուի ազգային-քաղաքական եւ հասարակական գործունէութեան:

Յարական ծովուծի գեղանկարիչի իր հանգամանքով, Այվազովսքի անձամբ կը մասնակցի ուսանական զօրքերուն մղած պատերազմներուն՝ թուրքերու դէմ: Մեծ է թիւը իր ստեղծագործած այն նկարներուն, որոնք նուիրուած են ուսանելու ծովային ընդհարումներուն: Այդ շարքէն աչքառու են մանաւանդ 1853-1856 թուականներուն իր նկարները, որոնք 1854-ին, Սեւաստոպոլի պաշարման օրերուն, առանձին ցուցահանդէսով ներկայացուած են՝ ոչ թէ կորով ներշնչելով թուրքերուն դէմ հերոսաբար մարտնչող զօրքին ու ժողովուրդին:

1850-ական եւ 1860-ական թուականներուն, ան անդուլ կը գտնուի ճանապարհորդութեան մէջ՝ գեղարուեստական աշխատանքներու բերմամբ: Կ'այցելէ Ամերիկայներ, Ափրիկէ եւ Մայրագոյն Արեւելք, կու տայ ցուցահանդէսներ եւ կը տիրանայ մրցանակներու: Այդ ճամբով է, նաեւ, որ իր հռչակն ու գործերը սեփականութիւնը կը դառնան աշխարհի բոլոր ժողովուրդներուն:

Բայց յատկապէս հայ իրականութեան հետ մնայուն եւ յարածուն կերպով յատկանշուեցաւ եւ շնչաւորուեցաւ Այվազովսքի կեանքը: 1866-ին ան ուղեւորուելով Կովկաս՝ կ'ըլլայ Թիֆլիս եւ Պաքո: 1869-ին ցուցահանդէս կու տայ իր գործերը ցուցադրելով Թիֆլիսի մէջ, այդպիսով հիմը դնելով հայ նկարիչներու անձնական ցուցահանդէսներու ականջութեան: Տեղին է նշել, որ իրեն աշակերտած եւ իր արուեստին շարունակողները եղան հայ մեծանուն նկարիչներ, ինչպէս՝ Վարդան Մախոբեան, Մանուկ Մահտեսեան եւ Մկրտիչ ձիւնեան:

Ինչպէս նշուեցաւ՝ Այվազովսքի աւելի քան 6000 նկարներու մեծարժէք ժառանգութիւն մը կապեց իր անունին: Գեղարուեստական տաղանդի այդ վարարման արգասիքն են հայ ժողովուրդին ու Հայաստանին՝ յատկապէս մեծախորհուրդ Արարատին նուիրուած իր գործերը, որոնց լաւագոյն նմոշներէն ոմանք մնայուն ցուցադրութեամբ իրենց փառաշուք տեղը գտած են Երեւանի Ազգ. պատկերասրահին մէջ: Այդ նմոշները՝ որ չիշատակուեցան վերել՝ 19-րդ դարու հայ ժողովուրդի կեանքին, անոր որոնումներուն եւ մաքառումներուն, տառապանքներուն եւ յոյսերուն, վեհութեան եւ անկումին խորագոյն պահերու մէջ յաւերժ պիտի մնան անկապտելի:

Այվազովսքի նաեւ գործնապէս իր պայքարողի մասնակցութիւնը բերաւ հայ ժողովուրդին դիմագրաւած ողբերգական հարուածներուն դէմ: Մանաւանդ մեծ եղաւ իր ներդրումը 1894-1896 թուականներուն համիտեան հայահալած կոտորածներու ժամանակ: Ան ամբողջ նկարաշար մը ստեղծեց եւ զայն արժանացուց միջազգային ցուցահանդէսներու՝ ոչ միայն հայոց իրաւունքին ու արդարութեան ձայնը իւրովի ու բարձրագոտ հնչեցնելով աշխարհով մէկ, այլեւ այդ

գործերուն վաճառքէն գոյացած գումարներով օգնութեան ձեռք կարկառեց Կովկաս ու իրիմ ապաստանած հայ գաղթականներուն:

Յատկապէս 1887-ին եւ 1897-ին, Այվազովսքիի կենդանութեան օրօք մեծ շուքով նշուեցան իր ծննդեան 70-ամեակն ու 80-ամեակը:

1915-ի Հայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներէն եւ մեր նորավիպագրութեան մեծ վարպետներէն՝ Երուխան (Երուանդ Սրմաքէշիանիւան, 1870-1915), 1900-ին Վառնա գտնուած շրջանին երբ կը խմբագրէր «Շաւիղ» թերթը, Յովհաննէս Այվազովսքիի մահուան առիթով ի միջի այլոց հետեւեալն է գրած. «... Այվազովսքիին հետ Հայ ցեղի հանճարին ամէնէն կորովի արտայայտութիւնն է որ կը շիջանի: Մեր ազգին դժբախտ ճակատագրին մթութեանը վրայ անիկա ջահ մըն էր ջերմացնող ու փողփողեցնող: Եւ կորուստը անոր համար ողբալի է մանաւանդ, որովհետեւ այս տեսակ շքեղ անհատականութիւններ ջիւղու լայնաբեր աչքեր են, որոնցմով ազգ մը կը նայի աշխարհին: Բայց բոլոր այս փառքի շողարձակումներուն մէջ, մեծանուն արուեստագետը ոգիով թունդ Հայ մը մնացած էր: Ու երբոր Հայաստանի կոտորածները աշխարհը թնդացուցին, իր աշխատանոցին մէջ Այվազովսքի սարսուռ, վրձինը սահեցաւ-ինկաւ իր մատներէն: Ինք՝ որ ալիքին ամէնի բանաստեղծութեամբը հեշտօրէն կ'օրօրուէր, արեւան ալիքներուն գաղափարին առջեւ սարսափահար մնաց. ու, սոսկաց՝ երբոր մտածեց թէ իր հայրենակիցներուն արեանը մէջ լողացող թագաւոր հրէշին կողմէ ընդունած պատուանշանը դեռ կուրծքին վրայ կը կրէր: Այվազովսքիով՝ որ կ'անհետանայ, մենք խորխորէն կրնանք պոռայ աշխարհին. «Ազգ մը որ Այվազովսքիներ կ'արտագրէ, չի՛ կրնար անհետանալ մարդկութեան տոմարէն. ուրեմն մենք պիտի մնանք»:

Անդրադառնալով Այվազովսքիի մահուան 125-ամեակին ու անոր թողած հարուստ հրիտակին, կարելի է հայտնի գրաւոր արտայայտութեան չբերել անգլիացի անուանի ծովանկարիչ ու բանաստեղծ ճոզըֆ Մալրոտ Ուիլիամ Թըռնըրի (1775-1851)՝ Այվազովսքիին նուիրուած «Մեծ Աշխարհահալը» խորագրեալ այն երկարաշունչ բանաստեղծութիւնը, որ յետագային թարգմանեց հանճարեղ բանաստեղծ Յովհաննէս Շիրազ: Կու տանք որոշ տողեր միայն. ... Բայց այդ լուսինն էլ միշտ ցածր է քեզից,

Բարձրագոյն վարպետ, օ՛, ներիր դու ինձ,
Եթէ վարպետն էլ քո վրձնածովից պահ մի... վախեցաւ,
Ինձ գայթակղեց քո վրձնախաղը, որ հրաշք դարձաւ,
Ով հայ պարմանի, ներկն ընկճեց մահին,
Լուսնի պէս յաւերժ կը մնաս գահին:

.....
Ծովը չի կարող իր փոթորիկը, իր ծով-մորիկը պահել յաւիտեան,-
Յաւերժացի ի դու ծով-մորիկը, Ծով փոթորիկը ծովի անսահման,-
Դու ստիպեցիր մշտաբայլ լուս-

Որքա՞ն Կարող Ենք Թիրքերու Հետ

Շարունակուած էջ 11-էն

ազգային փոքրամասնութիւններ չկան, բոլորը թուրք են: Քիւրտերուն (լեռնային թուրքեր) դասաւորած է, իսկ հայերը ու յոյները քրիստոնէայ թուրքեր: Ասոնցմէ պակաս չեն գործող նախագահը եւ կառավարութեան անդամները, որոնց հետ բանակցութիւններ կ'ընթանան: Թուրքիոյ մէջ սերունդէ սերունդ կը կրեն ազգայնական ծայրահեղ գաղափարները, շատ քիչ բացառութեամբ.

Այդպէսով, Թուրքիան իր հասարակութեան մէջ եւ պատմութեան ընթացքին ունեցած է այլատեսաճութիւն եւ խտրականութիւն, ներառեալ էթնիկ խտրականութիւնը, կրօնական խտրականութիւնը եւ օրինական ցեղապաշտութիւն փոքրամասնութիւններու նկատմամբ, մասնաւորապէս՝ հայերու, յոյներու, ասորիներու, արաբներու, հրեաներու հանդէպ, ինչպէս նաեւ քիւրտերու եւ շրջագայող խմբերու:

Ըստ «Չաման» օրաթերթի յայտնի յօդուածագիր Եսփուզ Բայտարի 2009 թուականի յօդուածին, Թուրքիոյ մէջ կ'աճին ցեղապաշտութեան եւ ատելութեան խօսքերը, յատկապէս հայերու եւ հրեաներու դէմ:

Հրանտ Տինք հիմնադրամի կողմէ 2014 թ. այս հրատարակութեան համաձայն թուրքական լրատուական միջոցներու մէջ թիրախային խումբերու նկատմամբ ատելութեան խօսքի դէպքերը՝ հայե-

րուն կը վերաբերի: (Առ հարիւր, Հայերը 75, հրեաները 66, քրիստոնէաները 45, Թուրքիոյ յոյները 21, քիւրտերը 10 առ հարիւր) եւ այդպէսով կը շարունակուի մինչեւ վերջ Շիա իսլամները 1 ըլլալով:

Վերջերս Պոլսոյ Սահակ Բ. Պատրիարքը բաւական խստաոճ յայտարարութեամբ հանդէս եկած եւ պախարակած է Պոլսու շրջանի քաղաքապետ Թանու Էօզճանի մասին, որ գրառում մը կատարած է Ապրիլ 5, 2025-ին եւ վիրաւորանքներ արձակած էր հայութեան հասցէին: Ի միջի այլոց ան ըսած է. (Վերջերս հասարակութեան ուշադրութեան արժանացած՝ Պոլսու քաղաքապետ Թանու Էօզճանին կողմէ հայկական ինքնութիւնը թիրախաւորող ատելութեան խօսքերը, մեր հասարակաց անցեալն ու միասին ապրելու կամքը կը թիրախաւորեն: Այսպիսի խօսքերը ո'չ երէկ, ո'չ այսօր եղբայրութեան, միութեան եւ ընկերային խաղաղութեան ծառայած են: Այս առիթով իշխանութիւնները եւ հանրութիւնը կը հրաւիրենք աւելի պատասխանատու լեզուով մը խօսելու...):

Եւ տակաւին ատելութիւնը կը շարունակուի հայերու դէմ:

Վերոյիշեալը էջ մըն է, որ ցոյց կու տայ թուրքերու ատելութիւն սփռող հոգեբանութիւնը հայերու դէմ, պարզապէս համեստ ուսումնասիրութիւն մը մեր միտքերը թարմացնելու համար, երբ անոնց հետ կը բանակցինք:

Գին
Կանգնել ծովափին եւ յաւերժանալ,
Թող յաւերժանայ քո սուրբ ազգն էլ ինձ,
Եւ ինչպէ՞ս քեզնով չըսքանչանալ,
Ով երիտասարդ, բայց ներիր դու ինձ,
Եթէ խոնարհեմ գլուխս ալեհեր Արուեստի առջեւ քո աստուածային,
Հանճարի առջեւ քո երանաբեր...

Թեկուզ ցամաքն ծովերը համայն՝
Քո կտակները ծով են յաւիտեան:
Իրօք, ազգ մը որ ծնած է Այվազովսքիներ, Երուխաններ ու Շիրազներ, Աստուծոյ աղօթքին դէմ յանդիման խօսեցուցած են ծովերուն շառաչն ու գրականութեան գոհարները, որոնք պիտի ապրին յաւերժ ու չեն մեռնիր դարերու երգին հետ...:
«Աղթամար»-«Մաղիկ»

Հայոց Ցեղասպանութեան 110 Ամեակի

Շարունակուած էջ 14-էն

Շնորհակալութիւն յայտնեց օրուան դասախօսուհիին, Միութեան Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներուն, Տիկն, Գարին Տոնիւքօքին իր պատրաստած համեղ քաղցրեղէններուն համար, Միութեան հաշուապահ Եղիա Քէ-

օսէին, Քարտուղարուհի՝ Մարիէթ Օհանէսիւն, եւ Թէքնիքըլ բաժնի պատասխանատու՝ Հերման Աքպըր-երքին իրենց տարած օգնութեան եւ ջանքերուն համար որով յաջողեցաւ սոյն ձեռնարկը: Ձեռնարկի աւարտին առնուեցաւ յիշատակի խմբային պատկերներ եւ տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՄԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

«Պայրըն Միւնիխ» Հռչակուեցաւ Ախոյեան



Միւնիխի «Պայրընը» Գերմանիոյ Պոլնտեւիկայի առաջնութեան աւարտէն երկու հանգրուան առաջ հռչակուեցաւ ախոյեան: 32-րդ հանգրուանին անցած տարուայ ախոյեան «Լեւերքուզընը» 2:2 արդիւնքով հաւասար աւարտեց խաղը «Ֆրայպուրկի» հետ եւ 68 կէտով երկրորդն է: «Պայրըն» այս հանգրուանին 3:3 արդիւնքով հաւասարեցաւ «ՌՊ Լայպցիկի» հետ եւ ունի 76 կէտ: «Պայրըն» 34-րդ անգամ դարձաւ երկրի ախոյեան:

«Ալ Ահլին» Ասիոյ Ախոյեաններու Լիկայի Գաւաթակիր



Սէուտական Արաբիոյ «Ալ Ահլին» նուաճեց Ասիոյ Ախոյեաններու Լիկայի գաւաթը: Եզրափակիչին «Ալ Ահլին» Քաթարի ձեռտա քաղաքին մէջ մրցեցաւ ճափոնական «Քաւասաքի Ֆրոնթալէի» հետ եւ յաղթեց 2:0 արդիւնքով: Կիսաեզրափակիչին «Ալ Ահլին» յաղթած էր սէուտական «Ալ Հիլալին» (3:1), «Քաւասաքի Ֆրոնթալէն»՝ սէուտական «Ալ Նասրին» (3:2):

«Չելսին» Յաղթեց «Լիվերփուլին»

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան 35-րդ հանգրուանին Լոնտոնի «Չելսին» ընդունեց նորընծայ ախոյեան «Լիվերփուլին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով: «Չելսիի» կողմը նշանակեցին արժանիքի կիսապաշտպան Էնցօ Ֆերնանտեսը ու անգլիացի կիսապաշտպան Քոուլ Պալմերը: Արձանագրուեցաւ նաեւ մէկ ինքնակոլ «Չելսիի» ի նպաստ: «Չելսին» 63 կէտով 5-րդն է, «Լիվերփուլը» վաստակած է 82 կէտ:

«Արսենալի» Պարտութիւնը

Անգլիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին փոխ-ախոյեան «Արսենալը» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Պորնմուտի» հետ եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով: «Արսենալը» 67 կէտով երկրորդն է, «Պորնմուտը» 8-րդ տեղը կը գրաւէ՝ 53 կէտով:

«Մանչեսթըր Սիթին» Յաղթանակ Ապահովեց Տէ Պրոյնտի Կոլը

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան 35-րդ հանգրուանին «Մանչեսթըր Սիթին» ընդունեց «Վուլվերհեմփթընին»: Գաթալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով պելճիքացի կիսապաշտպան Քեւրն Տէ Պրոյնտի նշանակած կոլի շնորհիւ: «Մանչեսթըր Սիթին» 64 կէտով երրորդն է, «Վուլվերհեմփթըն» 13-րդ տեղը կը գրաւէ՝ 41 կէտով:

Արման Ծառուկեանը Յաղթեց Տուպայի Սեյ



Խառն մենամարտերու թեթեւ ծանրութեան կարգի (մինչեւ 70 քկ) UFC-ի դասակարգման առաջին տեղը գտնուող, Հայաստանի ներկայացուցիչ Արման Ծառուկեանը Տուպայի մէջ Լրեպլինկի մենամարտին մրցեցաւ ռուս Մակոմեո Ջայնուկովի հետ եւ յաղթեց մրցավարներու միաձայն որոշմամբ: 2024-ի Ապրիլին UFC նախկին ախոյեան, պրագիլցի Չարլզ Օլիվեյրայի հետ UFC-ի արձանագրած յաղթանակէն յետոյ Արման Ծառուկեանը խառն մենամարտերուն դեռ չէ մրցած: Այս տարուայ Յունուարին մէջքի վնասուածքի պատճառով ան վերջին պահուն հրաժարած էր UFC ախոյեան, ռուս Իսլամ Մախաչեւի հետ տիտղոսային մենամարտին:

Սպերցեանի Կոլը Ու Կոլային Փոխանցուը Նպաստեցին «Կրասնոտարի» Յաղթանակին

Ռուսաստանի Փրեմիեր Լիկայի 27-րդ հանգրուանին առաջատար «Կրասնոտարը» հիւրընկալեց Կազանի «Ռուպինին» եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով: 5-րդ վայրկեանին 11-մեթրանոցէն հանդիպման հաշիւը բացաւ «Կրասնոտարի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցեանը: 40-րդ վայրկեանին անոր փոխանցումէն յետոյ դաշտի տէրերու առաւելութիւնը կրկնապատկեց պրագիլցի պաշտպան Վիտոր Տորմենան: «Կրասնոտարը» 61 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը:



«Ինթերը» Յաղթեց «Վերոնային»

Իտալիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին ախոյեան «Ինթերը» Միլանի մէջ մրցեցաւ «Վերոնայի» հետ: Իտալացի Սիմոնէ Ինձագիլի գլխավորած խումբը յաղթեց նուագագոյն արդիւնքով: 9-րդ վայրկեանին ալպանացի կիսապաշտպան Քրիստիան Ասլանին արդիւնակէտ կատարեց 11-մեթրանոցը: Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիկ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ 68-րդ վայրկեանին: «Ինթերը» 74 կէտով երկրորդն է եւ առաջատար «Նապոլիէն» ետ է 3 կէտով:

«Պարսելոնայի» Յաղթանակը

Սպանիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին առաջատար «Պարսելոնան» ընդունեց յետնապահ «Վալյատոլիտին» եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով: «Պարսելոնան» 79 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտով առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ռէալէն»:

Սփապի Տուպլը Նպաստեց «Ռէալի» Յաղթանակին

Սպանիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին ախոյեան «Ռէալը» Մատրիտի մէջ մրցեցաւ Վիկոյի «Սելտայի» հետ: Իտալացի Քաւլօ Անչելոտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով: «Ռէալէն» տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մֆապէն: «Ռէալը» 75 կէտով երկրորդն է եւ 4 կէտով ետ է առաջատար «Պարսելոնային»: «Սելտան» 7-րդն է՝ 46 կէտով: